

**ՌԱՖԱՅԷԼ
ՀԱՄԲԱՐԶՈՒՄԵԱՆ**

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
1921-1949 թթ. ՆԱՐՈՒՆԱԿԵԼ Է
ԲՈԼՇԵՒԿԵԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ**

**Rafael Hambardzumyan
Armenian Genocide was continued by the
Bolshevik Russia in the period
between 1921-1949**

9(47.925)
h-20

9-61

ՌԱՖԱԵԼ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
1921-1949 թթ. ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է
ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ**

**Rafael Hambardzumyan
Armenian Genocide was continued by the Bolshevik
Russia in the period between 1921-1949**

58817

Երևան
Բուկինիստ
2013

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)52
Հ 205

**Նուիրում եմ չորս զաւակներին՝
Հայկին, Արամայիսին, Անուշաւանին ու Ասքանազին**

Համբարձումեան Ռ.
Հ 205 Հայոց ցեղասպանութիւնը 1921-1949 թթ. շարունակել է
քոլոնիզացիոն Ռուսաստանը/ Ռ. Համբարձումեան.- Եր.:
Բուկինիստ, 2013.- 80 էջ:

Գրքոյկը մեկնաբանում է չուսումնասիրուած հետեւեալ խնդիրները.
Հայոց մեծ եղեռնի առաջին փուլը Ռուսաստանի օժանդակութեամբ 1895
թ. սկսուել է Թուրքիայում, շարունակուել մինչեւ Հայաստանի անկախ
Հանրապետութեան ոչնչացումը 1920 թ. դեկտեմբերին: Մեծ եղեռնի երկ-
րորդ փուլը 1921 թ. մինչեւ Հայաստանի բնակչութեան 1949 թ. բռնա-
գաղթն էր Ալթայ, որը մէն-մէնակ իրագործեց քոլոնիզացիոն Ռուսաստանը:
1920 թ. նոյեմբերի 22-ի ուիլսընեան Իրաւարար վճիռ-քարտէզը աշխարհի
14 պետութիւնների ստորագրութեամբ Հայոց ցեղասպանութիւնն ու հայ
ժողովրդի հայրենաստիքութիւնը միջազգայնօրէն հաստատած իրաւագոր-
պահանջագիր է Թուրքիայից: Հայկական հարցի նոր ըմբռնումը Իրա-
ւարար վճիռ-քարտէզով սահմանուած հայոց տարածքների վերամիա-
ւորումն է Հայաստանի Հանրապետութեանը:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)52

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ԱՄԵԱՅ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԳՐՈՒՄԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ Է**

Սոյն գիր իմովս ծայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեացէ,
Տարածեացէ զծածկեալսն, հոչակեացէ զգաղտնիսն,
Կականեացէ զկատարածն, հնչեացէ զմոռացեալսն...

(Սոյն գրածը իմ ծայնով ինձ պէս ինձ հետ պիտի աղաղակի,
Տարածի ծածկուածները, հրապարակի գաղտնիքները,
Կականի կատարուածները, հնչեցնի մոռացուածները):

Գրիգոր Նարեկացի, Մատենան, քան 22

Ճշտում առաջին. իբրեւ տեղանուն Հայաստան անուան ջնջու-
մը քարտէզներից սկսում է 1850-1890-ական թթ. հայոց դպրոց-
ներն ու ազգային այլ կառոյցները համատարած փակելով,
հայութեանը դաւանափոխելու համար Հայաստանեայց Եկեղեցու
դէմ ձեռնարկուած անսախաղէպ հալածանքներով ու մեր հա-
զարամայ օրէնքների ոչնչացումով, Թուրքիայի եւ Ռուսաստանի
սմիասնաբար իրագործած հայոց 1914-1916 թթ. Մեծ եղեռնով:

Երկրորդ. Հայոց ցեղասպանութիւնն ու հայրենագրկումը
մենք մեր քարոզանու մեջ պէտք է դարձնենք անանջատելի,
որը Գարեգին Նժդեհը աւելի քան 80 տարի առաջ կատարել
է իր ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ պատգամ- եզրոյթով: Այսօր,
Հայրենաստիքութիւն բառ-պատգամի ծնունդից 80 տարի յետոյ
միայն, հայերս սկսել ենք Հայոց ցեղասպանութեան քարոզչու-
թիւնը ճանաչման պահանջից մղել դէպի ամբողջական հա-
տուցումը...

Երրորդ. մինչ ամբողջական Հայրենաստիքութիւնը, Հայկա-
կան հարցի էութիւնն այսօր ազգովին պէտք է դարձնենք
1920 թ. նոյեմբերի 22-ին աշխարհի 14 պետութիւնների հաստա-
տած՝ Վուդրո թոմաս Ուիլսընի Իրաւարար վճիռ-քարտէզով
Հայաստանի Հանրապետութեանը յատկացուած քառասուն

հազար քառ. մղոն տարածքը Թուրքիայից Հայաստանին վերադարձնելու գործողությունները: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը եւ հայութիւնը Հայաստանի պետական սահմանը այսուհետեւ պետք է համարի ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնի տնօրինութեամբ 1920 թ. նոյեմբերի 22-ին հաստատուած միջազգային Իրաւարար վճիռ-քարտէզը: Պատմականօրէն աւելի յստակ՝ Հայաստանի Հանրապետութիւնը Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան եւ Հայաստան-Վրաստան միջպետական յարաբերութիւնների եւ պետական սահմանների քաղաքական-իրաւական-դիւանագիտական հիմքը այլեւս չպետք է շարունակի թողնել 1921 թ. մարտի 16-ին եւ հոկտեմբերի 13-ին պարտադրուած ռուսերօրք ապօրինի գործարքները: Հայաստանի Հանրապետութիւնն իր միջպետական յարաբերութիւնների եւ պետական սահմանների քաղաքական-իրաւական-դիւանագիտական հիմքը պետք է դարձնի 1920 թթ. գումարած Փարիզի, Մերի ու Սան Ռեմոյի միջազգային օրինազօր դաշնագրերի հայերին վերաբերող յօդուածները ու յատկապէս Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռ-քարտէզը: Այսինքն՝ ՀՀ-ն իր պետական սահմանը անկախութեան վերահռչակման օրուանից պետք է համարէր ուիլսոնեան Իրաւարար վճիռ-քարտէզով Հայաստանին տրուելիք 40 հազար քառ. մղոն հողամասը՝ գումարած 1920 թ. յուլիս-օգոստոսի դրութեամբ Հայաստանի առաջին Հանրապետութեան զբաղեցրած աւելի քան 60 հազար քառ. կմ տարածքը (ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնին ուղղուած ՀՀ վարչապետ Յովհ. Քաջազնունու՝ 1919 թ. հոկտեմբերի 28-ի պաշտօնական նամակի տուեալներով՝ 1919 թ. հոկտեմբերի դրութեամբ ՀՀ տարածքը 67 հազար 500 քառ./կմ էր՝ ներառեալ նախկինում Թիֆլիսի նահանգի մէջ մտած Ախալքալաքի գաւառը ամբողջութեամբ եւ Բորչալուի գաւառի հարաւային մասը):

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 1918 թ. ՄԱՅԻՍԵԱՆ ԱՌԻԻԾԱՄԱՐՏԵՐԸ

(Ղարաքիլիսա, Սարդարապատ, Ապարան, Բաքու)

1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութիւնը մարտի 22-ին Այսրկովկասին տուեց ինքնավարութիւն՝ ստեղծելով **Անդրկովկասեան յատուկ կոմիտէն**, որին 1917 թ. նոյեմբերի 28-ին փոխարինեց **Անդրկովկասեան Կոմիսարեատ** անունով կառավարութիւնը, որն էլ 1918 թ. փետրուարի 23-ին հիմնեց բօլշեւիկեան բռնապետութիւնից անկախ **Անդրկովկասեան Մէյմը**: Ռուսական յեղափոխութեան հենց առաջին օրերին ծագեց ռուսահայոց համազգային ժողով գումարելու գաղափարը, որը է՛լ աւելի տիրական դարձաւ, երբ 1917 թ. ապրիլի 15-ին Բաքում բացուեց Կովկասի մահմեդական ներկայացուցիչների նախաձեռնութեամբ համագումարը, իսկ մայիսին Մոսկուայում գումարուեց մահմեդականների համառոտական համագումարը²: 1917 թ. սեպտեմբերի 28-ին Թիֆլիսի միջկուսակցական մարմինը հաստատեց համագումարի ներկայացուցիչների կազմը. 113 դաշնակցական (որոնց մէջ նաեւ՝ Գարեգին Նժդեհը), 43 ժողովրդական, 23 Սոցիալ-յեղափոխական, 9 Սոցիալ-դեմոկրատներ (մէնշեւիկ, բօլշեւիկ եւ Հնչ.) եւ 7 անկուսակցականներ, ընդամենը 203 ներկայացուցիչ: Համագումարի հանդիսաւոր բացումը, որին մասնակցեցին նաեւ Արեւմտահայ Խորհրդի ներկայացուցիչներ, տեղի ունեցաւ 1917 թ. սեպտեմբերի 29-ին: Հ. Օհանջանեանի բացման ճառից յետոյ ընտրուեց 7 հոգանոց նախագահութիւն՝ Յ. Քաջազնունի, Ալ. Խատիսեան, Աւ. Ահարոնեան (-Դաշն.), բժ. Այվազեան (Ժող.), Լ. Աթաբեկեան (Ս. Յ.), Ղ. Տէր-Ղազարեան (Ս.Դ.), Ս. Մամիկոնեան (անկուս.) եւ 8 հո-

գուց բաղկացած քարտուղարութիւն՝ Ռուբէն Դարբինեանի գլխաւորութեամբ: Համագումարը հիմնեց 15 հոգուց կազմուած Գործադիր մարմին, որն անուանուեց **Ազգային Խորհուրդ** (6 դաշնակցականներ, երկուական սոց. չէզոքներ): Թէեւ Ազգային Խորհուրդն իր հրահանգները պիտի ստանար համագումարի ընտրած **Գերագոյն Ազգային Խորհրդից**, բայց իրերի բերումով **Ազգային Խորհուրդը** դարձաւ **Հայկական Գերագոյն Մարմին**, որը յետագայում հռչակելով Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ ՀՀ կառավարութիւն³:

1918 թ. Մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքուեց դաշնագիր մի կողմից Ռուսաստանի, միւս կողմից՝ Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի, Բուլղարիայի եւ Թուրքիայի միջեւ⁴, որի 4-րդ յօդուածը ազդարարում է. «**Ռուսաստան պիտի անէ իր բոլոր կարելին, ապահովելու համար շուտափոյր պարպումը Արեւելեան Անատոլիայի նահանգների եւ սրանց կանոնաւորեալ վերստին յանձնումը Թուրքիային**»: Կնքուեց նաեւ մի յատուկ «**Լրացուցիչ դաշնագիր Բրեստ-Լիտովսկի**»՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, որի առաջին յօդուածում նշուած է. «Ընդունուած են հետեւեալ որոշումները, որ վերաբերում են Կարս, Արդահան, Բաթում շրջանների պարպումը ի կատար ածելուն, որոնց մասին խօսուած է Բրեստ-Լիտովսկի հաշտութեան հաւաքական դաշնագրի 4-րդ յօդուածի 2-րդ պարբերութեան մէջ: ա) Այս նպատակի համար Ռուսաստանի Հանրապետութիւնը պարտաւորուած է ներկայ դաշնագիրը ստորագրելուց յետոյ 6-7 շաբաթում հեռացնել պատերազմից առաջ սահմանից այն կողմը գոյութիւն ունեցող եւ վերոյիշեալ շրջաններում գտնուող ոչ միայն իր բոլոր ուժերը, այլեւ քաղաքացիական ու զինորական բոլոր պաշտօնատար անձերը... ե)

Ռուսաստանի Հանրապետութիւնը պարտաւորուած է զօրացրել եւ բոլորովին արձակել տաճկահայատակ **ՀԱՅ ՀՐՈՍԱԽՄԲԵՐԸ** (այսպէս էլ մեծատառերով ընդգծուած է բնագրում, Ռ. Հ.), որ գտնուում են ռուս հողի վրայ եւ գրաւուած տաճկական շրջանների մէջ⁵»:

Երկրորդ անհրաժեշտ սրբագրումը. **Արեւելահայութեանը բնաջնջումից եւ ամբողջական տեղահանութիւնից փրկեցին եւ հայոց անկախ պետականութիւնը վերականգնեցին մայիսեան բացառիկ ազատամարտերը, որոնցից մէկը Բաքուի հայութեան 1918 թ. ապրիլ-յուլիս ինքնապաշտպանութիւնն էր**: Մայիսեան ազատամարտերի մասին բոլորի կողմից ընդունուած տեսակետը հետեւեալն է. Առանցքային հերոսամարտերը տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետութեան հետեւեալ երեք բնակավայրերում՝ **Սարդարապատ, Ղարաքիլիսա եւ Ապարան**: Թուրքիան, խախտելով Անդրկովկասեան Կոմիսարեատի հետ 1917 թ. դեկտեմբերի 5-ին կնքուած զինադադարը, 1918 թ. փետրուարի 10-ին անցաւ յարձակման եւ մօտ երկու ամսուայ ընթացքում գրաւեց Երզնկան, Կարինը, Սարիղամիշը, Կարսը: Թշնամին մայիսի 15-ին գրաւեց նաեւ Ալեքսանդրապոլը (-Գիւմրի), մայիսի 21-ին՝ Սարդարապատ կայարանն ու կողքի համանուն (այժմ՝ Հոկտեմբեր) գիւղը, ապա՝ Մրգաշատ գիւղը, Եղեգնուտ կիսակայարանից մօտեցաւ Ղարաքիլիսային, ս. Էջմիածնին ու Երեւանին: Մայիսի 22-ին Հայկական գլխաւոր ուժերը կամաւորականների հետ միասին՝ գնդապետ **Դանիէլ-Բէկ Փիրումեանի** հրամանատարութեամբ անցան հակայարձակման, Եղեգնուտ գիւղի մօտ ջարդեցին թուրքերին, ազատագրեցին Սարդարապատ կայարանն ու համանուն գիւղը: Մայիսի 22-ին յարձակման անցաւ նաեւ Հայկական զօրքերի Երեւանեան խմբաւորումը՝ զօրավար

Մովսէս Միլիկեանի հրամանատարութեամբ: Միլիկեանի հրամանով Հայկական 5-րդ հրաձգային գունդը՝ գնդապետ Պողոս-Բէկ Փիրումեանի հրամանատարութեամբ անցան ընդհանուր յարձակման: Հայոց բանակը եւ կամաւորները նախ՝ մայիսի 22-ին թշնամուն յետ շարտեցին մօտ 15-20 կմ, ապա՝ յաջորդ օրերին, յատկապէս մայիսի 27-ին ջախջախելով թշնամուն, ստիպեցին նահանջել Գիւմրի: Սարդարապատի ճակատամարտը վարում էր Երեւանեան խմբաւորման հրամանատար, զօրավար Մովսէս Միլիկեանը, զօրքերի ընդհանուր հրամանատարը զօրավար Թովմաս Նազարբէկեանն էր, իսկ թիկունքի ու Երեւանի պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ ամբողջ ազատամարտը գլխաւորում էր Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանը: Սարդարապատի համաժողովրդական-համահայկական ճակատամարտին, որը համարում է մայիսեան ազատամարտերից կարեւորագոյնը, հերոսացել են Պողոս-Բէկ եւ Դանիէլ-Բէկ Փիրումեան եղբայրները, Հարութային զօրախումբը (հրամանատար Կ. Հասան Փաշաեան-Ղասաբբաշեան), Երզնկայի հետեւակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, Խնուսի գունդը, մշեցիների խումբը՝ (հրամանատար՝ Պանդուխտ (Միքայէլ Մերեան), Զէյթունի հեծեալ գունդը, մասնակցել են ապագայ մարաջախտ Յովհ. Բաղրամեանը, գրող Ակսէլ Բակունցը, լեզուաբան Գր. Ղափանցեանը եւ ուրիշներ: **Բաշ-Ապարանի** ճակատամարտը տեղի է ունեցել 1918 թ. մայիսի 22-29-ը՝ հայկական կանոնաւոր զօրամասերի ու աշխարհագօրի եւ թուրքական զօրաբանակի միջեւ: Մինչեւ Դրոյի գլխաւորած բուն ճակատամարտը, այսինքն՝ մինչեւ կանոնաւոր հայոց բանակի մարտերը, թուրքական զօրքերի դէմ կռիւր Դ. Մելիքսեթեանի, Մ. Յովհաննիսեանի եւ աւագ քահանայ Յովհաննէս Տէր-Մինասեանի գլխաւորութեամբ Զիւլուջայ գիւղից, իսկ Փարպի

գիւղի ծխատէր քահանայ տէր Գեորգ Հայրապետեանի գլխաւորութեամբ Փարպի գիւղից մայիսի 22-24-ը սկսել են աշխարհագօրայինները, որոնց անմիջապէս միացել են Սարդարապատի ճակատից զօրավար Միլիկեանի ուղարկած 6-րդ հրաձգային գունդը՝ գնդապետ Դոլուխանեանի հրամանատարութեամբ: Ճակատամարտին իրենց խմբերով միացել են նաեւ Ա. Տէր-Պողոսեանը, Սէրոն (Մեղրակ Զաւալեան), բուլանդղցի Մուրադը, գառնեցի Մակեդոնը եւ ուրիշներ: Հայոց զօրքը Դրոյի հրամանատարութեամբ թուրքերին յաղթել սկսեց մայիսի 27-ից, իսկ մայիսի 29-ին թշնամուն յետ շարտեց Սպիտակ եւ Գիւմրի: **Ղարաքիլիսայի** ճակատամարտը տեւել է մայիսի 24-28-ը: Գիւմրին գրաւելուց յետոյ թուրքական զօրքերի մի մասը արշաւեց Երեւանի, մի մասը՝ Ղարաքիլիսայի վրայ: Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրէին հայոց զօրքերի գլխաւոր հրամանատար, զօրավար Թովմաս Նազարբէկեանը չկարողանալով կասեցնել համատարած նահանջը, 1918 թ. մայիսի 22-ին Հայոց Ազգային խորհրդին յղած նամակում զեկուցում էր, որ անհրաժեշտ է նահանջել, քանի որ նահանջելու հոգեբանութիւնը համատարած է. «Թուրքերի դէմ կռուելու պատրաստ մարդ բացարձակապէս չկայ»⁶: Իրօք, Սարդարապատում եւ Ապարանում պարտողական տրամադրութիւնները կազմակերպուած նահանջից եւ թշնամու դէմ պայքարը լեռները փոխադրելու մտայնութիւնից այն կողմ չէին անցնում, բանակը կազմալուծուած չէր, իսկ բնակչութիւնը որոշ տեղերում, մինչեւ կանոնաւոր հայոց բանակի ժամանումը, կազմակերպել էր ինքնապաշտպանութիւն: Մինչդէռ **Ղարաքիլիսայում համատարած խուճապ էր, զօրքը եւ ժողովուրդը չէին լսում դիմադրութիւն կազմակերպելու մի քանի անձանց կոչերը եւ Արեւմտահայաստանից մինչեւ Գիւմրի**

ընկնող տարածքներից աւելի քան կէս միլիոն փախստականների հետ միասին գլուխներն առած փախչում էին: Այս իրողություններից մեկնելով անվերապահօրէն կարելի է յայտարարել, որ թէև **Ղարաքիլիսայի** ռազմական գործողություններն անձամբ գլխաւորում էր ընդհանուր հրամանատար Թ. Նազարբեկեանը, այդուամենայնիւ հայթորքական ճակատներից ամենախարխուլն ու բարոյալքուածը հէնց **Ղարաքիլիսայի ճակատն** էր, քանի որ բարձրագոյն հրամանատարութիւնը ոչ մի ազդեցութիւն չունէր զօրքի վրայ, ո՛չ ոք ո՛չ մէկին չէր ենթարկում: Գնդապետ Բէկ-Մամիկոնեանը զօրավար Նազարբեկեանի կարգադրութեամբ Դիլիջանում հրաւիրած բազմամարդ ժողով- խորհրդակցութեանը Նազարբեկեանի անունից յայտարարեց, թէ կոչիւր շարունակելու հնարաւորութիւն չտեսնելով, անհրաժեշտ է նահանջել, ցանկացողներին իրաւունք է տրւում հեռանալ, իսկ հեռանալ չկամեցողները պէտք է մնային իրենց զօրամասերում, սպասէին նոր կարգադրութեան: Ելոյթ ունեցողների ու ներկաների բացարձակ մեծամասնութիւնը կողմ էր նահանջին: Եւ ահա հրետանու մարտկոցի պէտ, արցախցի երիտասարդ շտաբս կապիտան **Գուրգէն Տէր-Մովսիսեանը** յայտարարում է, որ ինքը չի հնազանդում հրամանատարութեան որոշմանը, քանի որ «նահանջը դաւաճանութիւն է. «Ես իմ թնդանդներով այս իսկ րոպէին մեկնում եմ ճակատ՝ մեռնելու: Ով տղամարդ է եւ հայու արիւն ունի իր երակներում, թող իմ յետեւից գայ»: Գուրգէն Տէր- Մովսիսեանից յետոյ խօսում է Գարեգին Նժդեհը՝ իր հոգեփոթորիկ առաջացնող **կուսամուղ** անբաղդատելի ճառը աւարտելով այսպէս. «Սպաները գնում են անձնատուր լինելու: Թող գնան, իսկ ես գնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապէս մեռած չի համարում, թող յետեւի

ինձ» : Այդ ճառից յետոյ ամբողջ դահլիճը վճռում է կռուել մինչեւ վերջին փամփուշտը: Գարեգին Նժդեհը ժողովականներին եւ այլոց հաւաքում է Դիլիջանի եկեղեցու բակում, մի քանի հազար հանրութեան առաջ մի նոր ցնցող ելոյթ է ունենում՝ արցունք քամելով բազմաթիւ ներկաների, նաեւ ծերունազարդ Թովմաս Նազարբեկեանի աչքերից⁷: **Ղարաքիլիսայի** վճռական ճակատամարտը սկսուեց մայիսի 24-ին, որից մէկ-երկու օր առաջ Արամ Մանուկեանը Յ. Իրազէկի (Յակոբ Տէր-Յակոբեան) միջոցով յորդորել է. «Պատրաստում ենք վճռական ճակատ տալու Սարդարապատի մօտ: Ի սէր Աստուծոյ, գօծէ երեք օր էլ պաշտպանեցէք Ղարաքիլիսայի ճակատը, որ թշնամին իր այդ կողմի ուժերը չբերի մեր վրայ»⁸: **Դիլիջանից** թշնամու վրայ առաջինը **Գարեգին Նժդեհի 1000 հոգանոց զօրախումբը** գնաց, որը տանելով փայլուն յաղթանակ, կասեցրեց թուրքերի յաղթարշաւը եւ բազմապատկեց զօրքի ու ժովորդի հաւատը յաղթանակի հանդէպ: Ի դէպ **Գարեգին Նժդեհին** հրահանգը տրուել էր Թ. Նազարբեկեանի անունից... Այսպիսով՝ **Ղարաքիլիսայի ճակատամարտի** նախօրէին զօրքի մեջ բացակայող կարգապահութիւնը, այն է՝ հրամանատար-զինուոր, ենթակայ-ստորադաս **այլեւս գոյութիւն չունեցող** յարաբերութիւնները, ինչպէս նաեւ՝ ռազմիկների ճակատելու ոգին ու կարողութիւնը **վերականգնեց** պողպորուչիկ **Գարեգին Նժդեհը, ո՛չ թէ ճակատի հրամանատարութիւնը**: Չլինէր Գարեգին Նժդեհը, զօրքն ու աշխարհագօրը չէին ենթարկուելու հրամանատարութեանը եւ թշնամու դէմ չէին կռուելու, ինչպէս չը կռուեցին Էրզրումում, Կարսում եւ Ալեքսանդրապոլում... Ըստ ճակատամարտին մասնակից բազմաթիւ յայտնի ու անյայտ դէմքերի վկայութեան, ճակատից խուճապահար փախչող

ժողովրդին եւ անձնատուր լինելու տրամադրուած զինուորականութեանը ոգետրել, հոգեփոխել, կազմակերպել, այն է՝ **ճակատամարտ տալու նախաձեռնութիւնը իր վրայ վերցնելով, հրամանատարութեանը չենթարկող հայոց զօրքին մայիսի 24-27-ը յաղթական կռուի է տարել Գարեգին Նժդեհը**⁹:

Բաքու: Ճշգրիտ հաշումներով 1912 թ. Բաքուի նահանգն ուներ 36 000 քառ.կմ տարածք եւ մէկ միլիոն 174.984 բնակիչ, որի 74 տոկոսը մուսուլմաններ էին, իսկ հայերի քանակը նահանգում 116 000 էր, որից 74 000-ը Բաքում եւ նաւթաշխարհում, իսկ մնացած 42 000-ը մահմեդականների մէջ, հիմնականում Շամախու եւ Գեօգչայի գաւառների լեռնային մասերում...1912 թ. Բաքուի եւ արւարձանների 74 000 հայերից Բաքում բնակւում էր 61 000-ը, իսկ նաւթաշրջաններում՝ 13 հազարը¹⁰:

Վստերագրերի վրայ հիմնուած Բ. Իշխանեանի բաւական վստահելի հաշումներով, Բաքուի հայ բնակչութիւնը մինչեւ 1918 թ. սեպտեմբերի 14-ի կոտորածի սկիզբը 887673 էր, իսկ կոտորածից յետոյ սպանուածների թիւը՝ 29060 էր¹¹, ողջ մնացածների թիւը՝ 858613:

Կրկնում եմ, զոհերի թիւը անհամեմատ շատ մեծ պիտի լինէր, գուցէ եւ ոչ մի հայ բնակիչ ողջ չմնար, եթէ Բաքում չլինէր հայերի ինքնապաշտպանութիւնը: Հայերը, անկախ կուսակցական պատկանելիութիւնից, քաղաքը թուրքերին չյանձնելու հարցում միական էին, քանի որ Բաքուի ինքնապաշտպանութիւնը բոլոր հայերի համար նշանակում էր աւելի քան 100 հազար հայերի փրկութիւնը կոտորածից: Ուստի, թէեւ Բրեստի պայմանագրով բոլշեփկները Բաքում պարտաւորուած էին դաշնակցել թուրքերի կամ առնուազն՝ Կովկասի թաթարների հետ, բայց բոլշեփկ հայերը շրջակայ-

քի բոլոր հայերի նման թուրքերին Բաքու մտնել թոյլ տալը բացառում էին, քանի որ խնդիրը կոտորածից փրկուելն էր... Այս պատճառով Բաքում բնակող միակ ազգութիւնը, որը կենսաբանօրէն պատրաստ էր մինչեւ վերջին փամփուշտը քաղաքը պաշտպանել թուրքական զօրքից, հայերն էին, որոնց ձեռքն էր փաստօրէն թէ՛ քաղաքացիական եւ թէ՛ յատկապէս ռազմական իշխանութիւնը: Քաղաքական իշխանութիւնը 1917 թ. նոյեմբերի 15-ից (հին տոմարով՝ նոյեմբերի 2) յանձնուել էր բազմակուսակցական հիմունքներով ընտրուած Բաքուի քաղաքացիական խորհուրդներին (ռուսերէն՝ սովետ): Բաքուի Հայոց Ազգային խորհրդի եւ Դաշնակցութեան ջանքերով 1918 թ. ապրիլի 25-ին Կովկասի բոլշեփկների թիւ մէկ ղեկավար Սո. Շահումեանը (1878-1918) ընտրուեց «ինտերնացիոնալ սկզբունքով» կազմուած Բաքուի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ եւ Արտաքին գործերի կոմիսար, որին բոլշեփկապետ Լենինը դեռեւս 1917 թ. դեկտեմբերի 16-ին էր նշանակել Կովկասի փոխարքայ՝ «Կովկասի գործերի արտակարգ կոմիսար»: Ժողկոմխորհի առանցքային պաշտօնների մի մասը նոյնպէս հայերի ձեռքն էր: Ասել է թէ՛ բազմակուսակցական հիմունքներով Բաքուի ընտրովի խորհուրդներում (սովետ) իշխանութիւնը մեծամասամբ պատկանում էր հայութեանը: Հայերի ձեռքն էր նաեւ զինուժը: Բաքուն թուրքերից պաշտպանող մօտ 20 հազարանոց բանակից 15-16 հազարը հայեր էին: Բանակը կազմուած էր չորս բրիգադից, որոնց **բոլոր** հրամանատարները, բացի մեկից, դարձեալ հայեր էին (Ղազարեան, Բէկ-Ջուրաբեան, Յարութիւնով): Բանակի գլխաւոր հրամանատարն էր Ժողկոմխորհի ռազմածովային կոմիսար Գր. Ղորղանեանը (Կորգանով), սպայակոյտի պետը՝ Ջ. Աւետիսովը, մատակարարման պետը՝ Մ. Տէր-Պօղոսեանը: Հայեր էին բանակի բոլոր 28 գումարտակների հրամանատարների 98 տոկոսը՝ չհաշուած Սեբաստացի Մուրադի, Վար-

դանի, Մեպուհի եւ այլոց գլխավորութեամբ կուռղ ՀՅԴ 700-ից ասելի մարտիկները¹²:

1918 թ. գարնանից Բաքուի հայութեան ձեռքին էր գտնուում նաեւ տարածքի տնտեսական լծակների գերակշիռ մասը: Փաստօրէն 1918 թ. ապրիլ-յուլիս ամիսներին Բաքուի ռազմաքաղաքական իշխանութիւնը նոյնքան հայկական էր, որքան այդ օրերին Երեւանում...

Բաքուի սովետը 1918 թ. յուլիսի 25-ին, հակառակ ժող-կոմխորհի նախագահ Ստ. Շահումեանի վճռական դիմադրութեան, անգլիացիներին Բաքու հրաւիրելու որոշում ընդունեց: Բաքուի խորհուրդը յուլիսի 31-ին իշխանութիւնը վերջնականապէս կորցրեց: Ստ. Շահումեանը օգոստոսի 18-ին 16 նաւով կուսակիցների հետ կամեցաւ հեռանալ Բաքուից, բայց փոթորիկի պատճառով յետ վերադարձան, ձերբակալուեցին, ապա ազատ արձակուելով սեպտեմբերի 16-ին հասան Կրասնովոդսկ, որի մօտերքում գտնուող Անդրկասպեան աւազուտներում 1918 թ. սեպտեմբերի 19-ի լոյս 20-ի գիշերը բոլշեիկները Մոսկուայի ցուցումով կազմակերպեցին Շահումեանի եւ թիմակիցների գնդակահարութիւնը՝ մեղքը գցելով անգլիացիների եւ էսեռների վրայ: Ստ. Շահումեանի սպանութիւնը ամենաշատը ձեռնադր էր իշխանութեան ձգտող Ստալինին, ով իր հեղինակութեամբ եւ կշիռով այդ օրերին տասնապատիկ զիջում էր Շահումեանին: Այսպիսով՝ Ստալինը 1937-1938 թթ. աննախադէպ չափերի հասցրած բոլշեիկ մրցակիցների բնաջնջումը սկսեց Ստ. Շահումեանով, որն այս առումով նրա առաջին զոհն էր: Ստալինը հաւանաբար իր քայլը Լենինի մօտ հիմնաւորել է այսպէս. «Բաքուի ինքնապաշտպանութեան ընթացքում Շահումեանը հայերի ազդեցութեամբ բոլշեիկների համար գործել է որպէս հակառակորդ, քանի որ Բաքուի թուրքերին կամ գօնէ առնուազն թրքացել Կովկասի թաթարներին օժանդակելու փոխարէն, կամայ թէ ակամայ պաշտ-

պանում էր հայերին, ասել է թէ՛ ըստ էութեան **կոռում էր բոլշեիկների դաշնակից Թուրքիայի դէմ...**

Համընդունելի իրողութիւն է, որ արեւելահայութեանը բնաջնջումից եւ ամբողջական տեղահանութիւնից փրկելով՝ հայոց անկախ պետականութիւնը վերականգնեցին մայիսեան հերոսամարտերը: Նշածս անատարկելի փաստերը ցոյց են տալիս, որ այդ հայրենակերտ համայնամարտերից մէկը Բաքուի 1918 թ. ապրիլ-յուլիսեան ինքնապաշտպանութիւնն էր, որը ՀՅԴ հիմնադիր **Ռոստոմի գլխավորութեամբ վարում էին** Մեքաստացի Մուրադը, Խանասարի Վարդանը, Մեպուհը, Ռուբէն Դարբինեանը, Յովհ. Քաջազունին, զօրավարներ Ղազարեանը, Յակոբ Բագրատունին, Իւան Բաղդամեանը եւ ուրիշներ: 1918 թ. սեպտեմբերի 15-ի վաղ առաւօտից սկսուած ու մինչեւ սեպտեմբերի 17-ի երեկոյեան շարունակուող կոտորածի վերջնական նպատակը մօտ **հարիւր քսան հազար հայերին խապառ բնաջնջելու թրքաբոլշեիկ ծրագրի իրականացումն էր, որը սակայն կասեցրեց Բաքուի հերոսամարտը**: Այդուամենայնիւ, թուրքերը Բաքում, նաեւ Շամախու եւ Գեոկչայի գաւառներում ու մերձակայքի հայահոծ վայրերում ռուս զօրացրուած բանակայինների էական օժանդակութեամբ եւ մասնակցութեամբ կոտորեցին մօտ 30 հազար հայի: Բաքուի պաշտպանութեան մասնակիցներից եղիշէ աւագ քահանայ Գեղամեանցի հաւաստի տուեալներով 1918 թ. սեպտեմբերի առաջին 3 օրերին Բաքում եւ շրջակայքում սպանուեց մօտ 17 հազար հայ, որոնց թուրքերի ձեռքն էր մատնուում «ռուս խաժամուժը»: Աւագ քահանան իր գրքում արձանագրել է նաեւ, որ Բաքուի ու այլ վայրերի թուրք-թաթարներից շատերը իրենց տներում ապրող հայերին թաքցրել էին իրենց տների պահարաններում, անկողիններում եւ այլ թաքստոցներում, սակայն «հարեւան ռուսների առաջնորդութեամբ և ցուցմամբ թուրք խու-

Ժանը եկել և հայերին մի առ մի դուրս հանելով, կոտորել ու կո-
ղոպտել էր: Դեպքեր են եղել, երբ այս ու այն թուրքը իր տանը
կեցող վարձատր հայերի դռան առաջ կանգնած՝ խուժանին
թոյլ չի տուել ներս մտնելու, փոխարենը առաջարկելով, որ իր
տունը կողոպտեն եւ եթե ուզում են իրան սպանեն, քան իր
տնատր հային: Մի այդպիսի մարդասեր, կարելի է ասել հերոս
թուրքի անունը մենք ստուգեցինք: Դա Մուստաֆա Բաֆիե
բժիշկն է¹³» ...

**Բաքուի 1918 թ. մայիս-յուլիս ամիսների հայոց ինքնա-
պաշտպանությունը, որպես արեւելահայության տեղահա-
նումն ու բնաջնջումն աւարտին հասցնելու թրքաբոլշեիկ
ծրագրի տապալում եւ Հայաստանի անկախ պետականու-
թիւնը վերականգնող գործուն, իր դերով եւ նշանակութեամբ
անվերապահօրէն հաւասարում է Ղարաբաղիսայի, Սարդա-
րապատի ու Ապարանի հերոսամարտերին:** Հետեւաբար՝ հայ
պատմագիտութիւնը Սարդարապատ խորհրդանիշի մէջ Ղա-
րաբաղիսայի ու Ապարանի հետ միասին անպայման պէտք է
գետնելի նաեւ Բաքուն, որի շարունակութիւնը Գեորջայի, Մի-
նիքի ու Արցախի 1918-1921 թթ. հերոսամարտերն էին:

Այդ օրերի հայոց պատմութեան առանցքային իրողու-
թիւնների անաչառ վերլուծութիւնը բերում է եւս մի եզրա-
հանգման: Հայութիւնը Սարդարապատի, Ղարաբաղիսայի,
Բաքուի եւ Ապարանի համայնամարտերը տալիս էր ոչ թէ
**միայն թուրքերի դէմ, այլ բոլշեիկների եւ Թուրքիայի մի-
ջեւ Բրեստ-Լիտովսկում կնքուած ռուս եւ թուրք զօրակցու-
թեան դէմ:** Ուստի պէտք է արձանա- գրուի, որ հայութիւնը
1918 թ. մայիսեան իր հերոսամարտերը տուել է **թրքաբոլշե-
իկ հայասպանութեան դէմ, որը եռապատկում է հերոսու-
թեան ծաւալը, դերն ու նշանակութիւնը...**

ՀՀ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓՈԽԼԻ ՄԿՁԻԲ

Դեռեւս մինչեւ թուրքերի հետ դաշնագրերի կնքումը,
բոլշեիկները Արցախ-Նախիջեւանը Կովկասի Թաթարստա-
նին բռնակցելու համար, ըստ ամենայնի, աջակցում էին
Թուրքիային: Իսկ Արցախ-Նախիջեւանը Ադրբեջանին
բռնակցելու առաջին քայլը այդ տարածքների բնիկ հայերի
զանգուածային տեղահանութիւնն ու կոտորածն էր, որը
թրքաբոլշեիկները 1920 թ. մարտի 22-ի լոյս 23-ի գիշերը
սկսեցին Շուշիի հայոց թաղամասի **եօթ հազար տները
հրկիզելով եւ 35 հազար հայի կոտորածով:**

Ռուսաստանի կառավարութիւնը 1920 թ. օգոստոսի 10-ին
Թիֆլիսում Հայաստանի Հանրապետութեան հետ կնքած
պայմանագրով մեր երկրին պարտադրեց Կովկասի Թա-
թարստանին յանձնել Զանգեզուրը, իսկ 1920 թ. օգոստոսի
24-ին Թուրքիայի հետ կնքած գաղտնի պայմանագրով՝
Թուրքիային տուեց 17 հազար զինուոր եւ 200,6 կգ ոսկու ձու-
լակտորներով անհատոյց օգնութիւն: 1920 թ. ընթացքում
բոլշեիկապետ Լենինը Թուրքիային յանձնեց 33 275 հրա-
ցան, 5 978 600 փամփուշտ, 327 գնդացիր, 54 թնդանոթ,
հրանոթի 122 497 արկ, 1500 սուր, 20 հազար հակազագ, 1921
թ. հոկտեմբերի 3-ին՝ նաեւ երկու ծովային կործանիչ, 6,5 մլն
ոսկու ձուլակտորներ, 1922 թ. մայիսին եւս 3,5 մլն ոսկով
ռուբլի, իսկ ռուս-թուրքական 1921 թ. կոնֆերանսում պար-
տաւորուեց Թուրքիային անհատոյց տալ 10 մլն ռուբլի ոսկի
եւ ռազմամթերք¹⁴:

Իմ հաշուումներով 1920-1922 թթ. Ռուսաստանը Թուրքիա-
յին տուել է մօտ 140 հազար քառ. կմ հայկական տարածք
(Ուիլսընեան Հայաստանը, Կարսը, Մուրմալուն, Արդահանը

եւ այլն), իսկ Կովկասի թաթարներին ու Վրաստանին՝ Արցախը, Նախիջեւանը եւ Զաւախքը: Այսպիսով՝ բոլշեւիկեան Ռուսաստանի յամառ ջանքերով ո՛չ Փարիզի կոնֆերանսի որոշումները ստորագրուեցին, ո՛չ էլ մանաւանդ իրագործուեց Մերի դաշնագրի՝ հայութեանը վերաբերող թիւ 88-93 կետերը: Վուդրո Ուիլսոնի կազմած Իրաւարար վճիռը 1920 թ. նոյեմբերի 22-ին ընդունելուց տասն օր յետոյ Ռուսաստանը 1920 թ. դեկտեմբերի 2-ին ներխուժելով մեր երկիր, վերացրեց Հայաստանի անկախ Հանրապետութիւնը եւ 1920 թ. վերջից սկսած Հայոց Մեծ եղեռնը շարունակեց միայնակ: Մոսկուան Հայաստանի իր դրածօ կացնահար վարիչների ձեռամբ աննախադէպ դաժանութեամբ կոտորեց փախչել չհասցրած ՀՀ պաշտօնեաներին, զինուորականներին, նաեւ ամբողջ հրամանատարական կազմը, որի մի մասին, աւելի քան 1400 կրտսեր եւ բարձրաստիճան սպայ, արքայրեց Ռեազան: 1921 թ. փետրուարի 18-ին Հայաստանի բնակչութիւնը համաժողովրդական ապստամբութեամբ հա-

* ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնին ուղղուած ՀՀ վարչապետ Յովհ. Բաջազնունու՝ 1919 թ. հոկտեմբերի պաշտօնական նամակի տուեալներով՝ 1919 թ. հոկտեմբերի դրութեամբ ՀՀ տարածքը 67 հազար 500 քառ. կմ էր՝ ներառեալ նախկինում Թիֆլիսի նահանգի մէջ մտած Ախալքալակի գաւառը ամբողջովին եւ Բորչալուի գաւառի հարաւային մասը: Այդ նամակում նշուած է նաեւ, որ ՀՀ բնակչութիւնը 2 միլիոն 159 հազար էր, որից հայերը մէկ միլիոն 293 հազար էին, ամբողջ բնակչութեան մօտ 60 տոկոսը: Նիկողայոս Ադունցը 1920 թ. աշնանը գրում է, որ հայերի թիւը Այսրկովկասում, ներառեալ թուրքահայ գաղթականները, ոչ պակաս է, քան երկուսուկէս միլիոն, աւելի քան 200 հազար հայ բնակւում է Կոստանդնուպոլսում, ոչ պակաս, քան 100 հազար հայ է բնակւում Սիրիայում եւ Կիլիկիայում, աւելի քան 100 հազարն էլ՝ ԱՄՆ-ում: Տե՛ս Ղազարեան Հ., Մերի պայմանագիրը եւ Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերեալ, հտ. երկրորդ, 2012 թ., էջ 301-309: Ն. Ադունց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երեւան, 1989 թ., էջ 29:

յրենիքը դարձեալ ազատագրեց Ռուսաստանից: Դրանով հայերս բոլշեւիկեան ամբողջատիրութեան տակ կքած 100-ի չափ ազգութիւններից միակը եղանք, որ մօտ հինգ ամսով վերականգնեցինք մեր երկրի անկախութիւնը: Բոլշեւիկներն այսպիսով 1920-1921 թթ. Թուրքիային զէնք, զինամթերք, ոսկի, զինուոր եւ հրամանատարներ տալով՝ մեծապէս օգնեցին, որպէսզի Առաջին աշխարհամարտում պարտուած այդ երկիրը ոչ միայն ազատուէր Մերի միջազգային դաշնագրով եւ ուիլսոնեան Իրաւարար վճիռ-քարտէզով նախատեսուած մասնատումից, այլեւ Հայաստանից բռնագրաւած տարածքների հաշուին դառնար տարածաշրջանի ազդեցիկ տէրութիւններից մէկը:

* Հայաստանի ժողովրդի 1921 թ. փետրուարեան ապստամբութիւնը բոցավառել է ռուսներոք բռնատիրութեան դէմ Գարեգին Նժդեհի գլխաւորած Լեւոնահայաստանի ազատամարտը, որը 1921 թ. ապրիլին Լեւինին ստիպեց Հայաստանը վերանուանելուց յետոյ կոմունիստական - Հայաստանի ղեկավար նշանակել ազգային յամագումների համար բոլշեւիկ ղեկավարների քննադատութեանց թիրախ դարձած Ալեքսանդր Մյասնիկեանին: Կայսրութիւնը երկիւղւմ էր, որ եթէ սովետ Հայաստանում շարունակուի բնակչութեան ոչնչացումն ու կողոպուտը, Հայաստանը նորից ապստամբելով, Լեւոնահայաստանի օգնութեամբ կարող է նորից տապալել իրենց բռնապետութիւնը, ինչը կարող է օրինակ դառնալ նաեւ Այսրկովկասի միւս ազգերի համար:

**ԵՐՐՈՊԱՆ, ԱՄՆ-Ը, ՃԱՊՈՆԻԱՆ, ՆԱԵՒ
ԹՈՒՐԳԻԱՆ 1919-1922 թթ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ
ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԽԱՐԱՐ ՎՃԻՌ-ՔԱՐՏԷԶՈՎ
ԳԾԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԳԻԱ ՍԱՀՄԱՆԸ**

1919-1920 թթ. սուլթանական Թուրքիան Երոպայի պահանջով ձերբակալեց եւ ոազմական երեք արտակարգ դատարաններով դատի տուեց թուրքահայոց կոտորածները իրականացնողներին: Թուրքական դատարանը 100-ից ավելի բանտարկեալներից տարբեր տարիներով ազատագրկեց 20 պաշտօնեայի, 11 բարձրագոյն պաշտօնեայի դատապարտեց հեռակայ, որոնցից 6-ին՝ մահապատժի (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ, Բեհադդին Շաքիր, Նայիլ բէ): Դատապարտուածներից 77 հոգու էլ անգլիացիները արքայեցին Մալթա կղզի, որ այդ ժամանակ Անգլիայի տարածքներից էր¹⁵:

Այդ դատապարտութիւններով Թուրքիան 1919 թ. կեսերին պետականօրէն ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: Հայոց ցեղասպանութիւնը ճանաչել են 1919-1920 թթ. Փարիզի ու Սան Ռեմոյի միջազգային կոնֆերանսներին մասնակցած եւ Սեւրի միջազգային դաշնագիրն ու 1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռը ստորագրած երոպական պետութիւնները, Ճապոնիան եւ Սաուդեան Արաբիան, որոնք Իրաւարար վճիռ-քարտէզով Թուրքիային պարտաւորեցրեցին Հայաստանի Հանրապետութեանը վերադարձնել 40 հազար քառ. մղոն տարածք (աւելի քան 90 հազար քառ. կմ): **Հայաստան-Թուրքիա սահմանները հիմնաւորող միջազգային այդ քարտէզը հաստատուել է Սեւրի միջազգային դաշնագրի որոշումով, ո-**

րը ստորագրել են՝ 1. Բրիտանական կայսրութիւնը, 2. Ֆրանսիան, 3. Իտալիան, 4. Ճապոնիան (այս 4 երկրները պաշտօնապէս կոչուում էին Գլխաւոր Դաշնակից տերութիւններ), 5. Հայաստանը, 6. Բելգիան, 7. Յունաստանը, 8. Հնչազը (այժմ՝ Սաուդեան Արաբիա), 9. Լեհաստանը, 10. Պորտուգալիան, 11. Ռումինիան, 12. Մերքիա-Խորվաթիա-Սլովէնական թագաւորութիւնը, որոնք յետոյ մտան Հարաւսլաւիայի մեջ, 13. Չեխոսլովակիան (այս 9 պետութիւնները կոչուում էին Գլխաւոր դաշնակից տերութիւնների դաշնակից տերութիւններ) եւ 14. Թուրքիան: Սեւրի դաշնագրի Հայաստանին վերաբերող կէտերը 1919 թ. փետրուարից սկսած մինչեւ գլխաւոր դաշնակից տերութիւնների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա եւ Ճապոնիա) կողմից նշուած կէտերի հաստատումը Սեւրում, նախապատրաստել եւ ստորագրութեան են պատրաստել Փարիզի եւ Սան Ռեմոյի կոնֆերանսները: 1919 թ. յունուարի 18-ից մինչեւ 1920 թ. յունուարի 21-ը ընդհատումներով գումարուած Փարիզի հաշտութեան եւ 1920 թ. ապրիլի 19-16-ը Իտալիայի **Սան Ռեմո** քաղաքում անցկացուած խորհրդաժողովներին ներկայ էին հայկական երկու պատուիրակութիւններ՝ Ազգային պատուիրակութիւնը՝ հայրենապաշտ մեծահարուստ Պօղոս Նուբարի գլխաւորութեամբ, որն իր ամբողջ կարողութիւնը նուիրել էր հայկական հարցի լուծմանը եւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ յայտնի արձակագիր ու ազգային-ընկերային գործիչ Աւետիս Ահարոնեանի գլխաւորութեամբ: Երկու պատուիրակութիւններն էլ, թէեւ որոշ հարցերում ունէին էական տարակարծութիւններ, բայց Փարիզի խորհրդաժողովի քննարկմանը ներկայացրած միասնական փաստաթղթում ամրագրած պահանջ-յուշագրում միակամ էին: Հայկական երկու պատուիրակութիւնները ներկայացրեցին հետեւեալ յուշագիրը, որը արժանացաւ խորհրդաժողովի

հաւանութեանը.

Հայկական անկախ պետականութեան ճանաչումը «Արեւմտահայաստանի եւ Արեւելահայաստանի վերամիաւորման հիման վրայ», Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող 7 նահանգների, Հայաստանի Հանրապետութեան տարածքների եւ Կիլիկիայի միացումով, Հայաստանը դրուելու էր Ազգերի լիգայի կամ դաշնակից տերութիւններից մէկի երաշխաւորութեան տակ, կոնֆերանսը պէտք է դրամական հատուցում տար հայերի կրած վնասների դիմաց, դաշնակից տերութիւններից մէկը պիտի ստանձնէր Հայաստանի մանդատը, ջարդերի պատասխանատուները պէտք է դատի տրուէին ու պատժուէին, բռնի տեղահանութիւններն ու քստրուածները պէտք է վերադարձուէին իրենց բնակավայրերը: Փարիզի կոնֆերանսը 1920 թ. յունուարի 19-ին ճանաչեց նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը: Դաշնակից տերութիւնները նախ Սան Ռէմոյում, այնուհետեւ 1920 թ. օգոստոսի 10-ին՝ Սեւրում, ԱՄՆ նախագահին դիմեցին հետեւեալ երկու առաջարկներով՝

ա.-Ստանձնել Հայաստանի մանդատը,

բ.-Իրաւարար վճռով որոշել Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը: Սեւրի դաշնագիրը որոշեց Թուրքիայից Հայաստանի Հանրապետութեանը վերադարձնել ԷՐԶՐՈՒՄԻ, ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ եւ ՏՐԱՊԻԶՈՆԻ վիլայէտներից այնքան տարածք, որքան որ կառաջարկի ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնը՝ իր տնօրինութեամբ գծուած քարտէզով: Վուդրո Ուիլսոնի այդ քարտէզը նշուած 14 տերութիւնները հաստատեցին 1920 թ. նոյեմբերի 22-ին, որով Թուրքիան պարտաւորուեց էր Հայաստանի Հանրապետութեանը վերադարձնել ոչ թէ 7 նահանգները, ինչին հաւանութիւն էր տուել Փարիզի խորհրդածողովը, այլ Էրզրումի, Վանի, Տրապիզոնի եւ Բիթլիսի 4 նահանգներից 40 հազար քառ. մղոն հայկական

տարածք. Էրզրումից՝ 40 հազար քառ.կմ, Վանից՝ 20 հազար, Տրապիզոնի եւ Բիթլիսի նահանգներից՝ 15 հազարական քառ.կմ¹⁶:

Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետութեան տարածքը մօտ 71 ու կէս հազար քառ. կմ էր: Ամբողջ Հայաստանը Սեւրով նշուած հողամասերի հետ կունենար մօտ 162 հազար քառ. կմ տարածք:

Ուիլսոնեան իրաւարար վճիռ-քարտէզը աշխարհի 14 տերութիւնների ստորագրութեամբ 1920 թ. նոյեմբերի 22-ին հաստատուած միջազգային իրաւագոր պահանջագիր է Թուրքիայից: Փարիզի, Սան Ռէմոյի ու Սեւրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հատուածը եւ ուիլսոնեան Իրաւարար վճիռ-քարտէզը Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանութիւնը եւ հայ ժողովրդի հայրենատիրութիւնը միջազգայնօրէն հաստատող եւ ցայսօր իրաւական նշանակութիւնը պահպանած փաստաթղթեր են:

Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռ-քարտէզը ստորագրուելուց 4 ամիս անց Մոսկուայում 1921 թ. մարտի 16-ին կնքուած ռուս-թուրքական «Եղբայրութեան» պայմանագրով Հայաստանի Նախիջեւան, Արցախ, Զանգեզուր եւ Զաւախք տարածքները յանձնուեց Ադրբեջանին ու Վրաստանին, իսկ Արարատ լեռը, Ղարսը, Սուրմալուն եւ այլ տարածքներ՝ Թուրքիային: Այնուհետեւ բուլղերիկեան Ռուսաստանը Թուրքիային զէնք-զինամթերք, ոսկի, զինուոր ու հրամանատարներ ուղարկելով օգնեց, որպէսզի չիրագործուի Սեւրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հատուածը: Ի դէպ՝ Սեւրի պայմանագրով Թուրքիայից ազատուեցին մօտ տասը պետութիւն՝ Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը, Հեջազը (այսօր՝ Սաուդեան Արաբիա), Եգիպտոսը, Կիպրոսը, Մարոկկոն, Թունիսը, Լիբիան: Բայց ռուս եւ թուրք զինակ-

ցութիւնը 1920-21 թթ. հասաւ այն բանին, որ 433 յօդուածից բաղկացած այդ պայմանագրի հիմնականում միայն Հայաստանին վերաբերող վեց կէտերը չիրագործուեցին: Աւելին՝ 1921 թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական պայմանագրի հիմնական նպատակը Հայոց ցեղասպանութիւնն Արեւելահայաստանում եւս շարունակելով՝ աւարտին հասցնելն ու Հայաստանի պետականութիւնն ամբողջովին վերացնելն էր: Սակայն Հայաստանի Հանրապետութիւնը վերացնելու՝ արդէն իսկ գրեթէ իրագործուած ծրագիրը ի չիք դարձրեց Գարեգին Նժդեհի գլխաւորութեամբ սկսուած ՄԻՒՆԻՔԻ առիծամարտը, որի շնորհիւ Զանգեզուր-Միւսիքը մնաց Հայաստանի կազմում: Իրօք, այդ օրերին Ռուսաստանը Հայաստանի Հանրապետութիւնը գրեթէ արդէն վերացրել էր, քանի որ Արցախն ու Նախիջեւանը Ադրբեջանին, իսկ Զաւախքը Վրաստանին բռնակցելուց յետոյ, Զանգեզուրն էլ 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքած Ռուս-հայկական պայմանագրով արդէն տուել էր Ադրբեջանին: Ծրագրուած էր Զանգեզուրը Հայաստանից բռնազատելուց յետոյ Վրաստանին յանձնել նաեւ «Չէզոք գօտի» յայտարարուած Լոռին: Դրանից յետոյ Հայաստանին մնալու էր Արարատեան դաշտը միայն՝ մօտ 10 հազար քառ. կմ տարածքով, որը թրքաբօլշեւիկներին հնարաւորութիւն պիտի ընձեռէր 1922 թ. մարտի 11-ին Անդրկովկասեան ֆեդերացիան հիմնելիս, Հայաստանը այդ կառոյցի մէջ մտցնել **ոչ թէ որպէս հանրապետութիւն, այլ առաւելագոյնը իբրեւ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ**, հաւանաբար Ռուսաստանի կազմում¹⁷:

Երբ ՀՀ ժողովուրդը վերականգնել էր իր անկախ պետականութիւնը, 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական «բարեկամութեան» Լենին-Աթաթուրք իրաւամբօ **հողակողոպուտով** Ռուսաստանը Արեւելահայաստանի մեծ մասը (Կարսը,

Արդահանը, Սուրմալուն, Իգդիրը, Նախիջեւանը, Արցախը, Զաւախքը եւ այլ տարածքներ) բաժանեց Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ՝ վաղօրօք հայազրկելով հաշաւ տարածքների մի մասը: 1921 թ. գործարքի հիմնական նպատակը, սակայն, Արեւելահայաստանը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետութիւնը նոյնպէս մեջտեղից վերացնելով եւ հայազրկելով, Հայաստանն առանց հայերի ծրագիրը ամբողջովին աւարտելն էր, որի իրագործումը խափանեց Գարեգին Նժդեհը՝ ջախջախելով եւ Զանգեզուրից վտարելով սովետական Ռուսաստանի հրոսակներին:

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՆԱԽԾԻՐԻ ՎՃՌԱԿԱՆ ՓՈԽԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1936-1937թթ.)

1937 թ. յունիսին Ստալինի ընդունած «Հակայեղափոխական վնասարարության եւ նենգադուլների գործերի հետաքննության վերաբերեալ» որոշումով դատական գործերը լսում էին առանց կողմերի մասնակցության, անմիջապէս ի կատար ածող դատավճիռները բողոքարկման ենթակայ չէին, մեղադրանքի գլխաւոր հիմք էին դարձնում մեղադրեալի խոստովանութիւնը եւ վերջապէս, ըստ էութեան, արտօնում էր մեղադրեալին տանջելն ու կտտանքների ենթարկելը: Ստեղծուեցին «Ցատուկ խորհրդակցութիւն» եւ «Եռեակ» անուանող մարմինները, որոնք պատիժ էին արձակում առանց դատավարութեան: Հայաստանում համատարած ձերբակալութիւնները եւ գնդակահարութիւնները աննախադէպ չափերի հասան 1936 թ. սկսած մինչեւ 1937 թ. վերջը: 1936 թ. յուլիսի 9-ին Թիֆլիսում Հայաստանի կոմունիստների ղեկավար Աղ. Խանջեանին գնդակահարելուց յետոյ Հայաստանի Կոմունիստական բոլշեւիկեան կուսակցութեան՝ Հ(բ)Կ կենտրոնական կոմիտէն, 1936 թ. «սեպտեմբերեան պլէնումով» ղեկավար կարգեց Ա. Ամատունուն, լսեց Խ. Հայաստանի ՊԱԿ-ի (Պետական անվտանգութեան կոմիտէ, ռուսերէն՝ ԿԳԲ) նախագահ Խ. Մուղդուսու «Ն. Ստեփանեանի, Ա. Գալոյեանի, Դր. Միմոնեանի, Ակսէլ Բակունցի եւ ուրիշների «Հակայեղափոխական-տրոցկիստական ահաբեկչական խմբի մասին» հաղորդումը: 1936 թ. «Սով. Հայաստանի Գերագոյն դատարանի յատուկ կոլեգիայի» քննութեանը յանձնուեց 662 մարդու վերաբերեալ («հակայեղափոխական քարոզչութիւն, ազգայնական ու տրոցկիստական արտայայտութիւնների տարածում», «հակայեղափո-

խական կազմակերպութիւններին ու խմբերին (դաշնակցականներ եւ ուրիշներ) անդամակցում, բանդիտիզմ եւ այլն») 352 գործ: Սով. Հայաստանի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (Ներքժողկոմատ) ձերբակալեց 1138 մարդու: Ձերբակալուածների ամենախոշոր երեք խմբերն էին «տրոցկիստները»՝ 417 հոգի, «հակայեղափոխական, ազգայնական քարոզչութիւն»՝ 251, «այլ հակայեղափոխական եւ պաշտօնի յանցագործութիւններ»՝ 172 մարդ: 1937 թ. գնդակահարեցին Ակսէլ Բակունցին, Եղիշէ Չարէնցին, գրականագէտ Դր. Տէր-Միմոնեանին եւ բազմաթիւ ուրիշների, որոնցից Սովետական Հայաստանի նախկին թիւ մէկ ղեկավար Ս. Տէր-Գաբրիէլեանին երրորդ յարկից ցած նետելով են սպանել: 1938 թ. գնդակահարեցին խոշոր իրաւաբան Գրիգոր Չուբարին, 1937-1938 թթ. բանտարկել եւ խոշտանգումներով հարցաքննել են աշխարհի մեծագոյն լեզուաբաններից Հրաչեայ Աճառեանին եւ բազմաթիւ ուրիշ գիտնականների, արուեստագէտների, գրողների, մտաւորականների¹⁸:

Սովետական միութիւնը գերագոյն ղեկավար մարմին Համամիութենական կոմունիստական բոլշեւիկեան կուսակցութեան կենտկոմի քաղբիւրոն 1937 թ. յուլիսի 11-ի որոշումով սահմանել էր, թէ որ հանրապետութիւնից ինչքան մարդ պէտք է ձերբակալուի-գնդակահարուի: Հուլիսի 11-ի յանձնարարականով Հայաստանին յանձնարարուած էր բանտարկել 500 հոգու, իսկ սեպտեմբերի 22-ի հրահանգով՝ լրացուցիչ եւս 700 հոգու: Սակայն Հայաստանի ղեկավարութիւնը «գերակատարելով պլանը»՝ գնդակահարեց 1500 մարդու¹⁹:

1937 թ. օգոստոսի 11-ից մինչեւ 1938 թ. վերջը Մուղդուսու ղեկավարութեամբ գործող «Եռեակի» որոշումով գնդակահարուել է 4603 մարդ, տարբեր չափերի բանտարկութեան դատապարտուել 2915 հոգի: Միայն 1937 թ. օգոստոսի 11-ից

մինչև սեպտեմբերի 18-ը, 37 օրուայ ընթացքում «Եռեակը» 354 ձերբակալուածից 304-ին դատապարտել է գնդակահարութեան: 1936-1938 թթ. դատապարտուել է 15 հազարից աւելի մարդ, որոնցից 4951-ը՝ միայն 1937 թ., իսկ այդ 4951-ից 3140-ը գնդակահարուել է: Որոշուած էր ձերբակալել 2000 ուսուցչի, բայց ձերբակալուեցին 3153-ը, որոնցից 1390-ին գնդակահարեցին: Պաշտօնական տուեալներով, որոնք սովորաբար նուազեցուած էին արձանագրում, 1921-1953 թթ. Հայաստանում բռնադատուել է 42 հազար մարդ²⁰:

Նպատակն անվերապահօրէն Հայաստանն առանց հայերի ծրագրի իրագործումն էր, Հայաստանին տրուած հանրապետութիւն տիտղոսի եւ Հայաստան անուան վերացումը:

Բ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍՈՎԵՏԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ ԶՕՀՈՒԵՑ ԱՌՆՈՒԱԶՆ 250 ՀԱԶԱՐ ՀԱՅ

Համաշխարհային արդի պատմագիտութիւնը հիմնաւորապէս ապացուցուած է համարում, որ ինչպէս Առաջին, այնպէս էլ յատկապէս Երկրորդ աշխարհամարտը բռնկելու մէջ Ռուսաստանը վճռական դեր է ունեցել: Երկրորդ աշխարհամարտը Գերմանիան ու Ռուսաստանը սկսեցին 1939 թ. օգոստոսի 23-ին կնքած «Չյարձակման մասին» տասնամեայ պայմանագրով, որի «լրացուցիչ գաղտնի արձանագրութիւնով» Ստալինն ու Հիտլերը Բալթիկ եւ Մեւ ծովերի միջեւ ընկած ամբողջ տարածքը բաժանեցին իրար մէջ: Պայմանագրի գաղտնի արձանագրութեամբ այդ պետութիւնները սեպտեմբերի 1-ին եւ 17-ին յարձակուեցին Լեհաստանի վրայ: Գերմանիան գրաւեց Լեհաստանի մի մասը, Ֆրանսիան, Բելգիան, Հոլանդիան, Լիւքսեմբուրգը: Սովետները գրաւեցին Լեհաստանի արեւելեան մասը, Լիտվան, Էստոնիան, Լատվիան, Արեւմտեան Ուկրաինան, Ռումինիայի եւ Ֆինլանդիայի որոշ տարածքներ: 1939 թ. սեպտեմբերից մինչեւ 1941 թ. յունիսի 21-ը սովետական կայսրութիւնը զաւթեց **աւելի քան 250 հազար քառ. կմ տարածք՝ մօտ 25 միլիոն բնակչութեամբ:** Միայն 1939 թ. սովետների զաւթած տարածքներում կար մօտ 20 միլիոն բնակչութիւն²¹: Հետեւաբար բացարձակ սուտ է այն պնդումը, թէ Գերմանիան, խախտելով սովետագերմանական դաշնագիրը, իբր թէ այդ երկրի վրայ յարձակուեց առանց որեւէ հիմքի: Ճշմարտութիւնը հետեւեալն է. երբ ամբողջ Եւրոպան գրաւել ձգտող սովետական կայսրութիւնը սկսեց նուաճել անհամեմատ աւելի մեծ տարածքներ, քան պայմանաւորուել էին Ռիբենտրոպ-Մոլոտով հողաբաժանումով, Մեծ Բրիտանիայի վար-

չապետ Ուինսթոն Չերչիլի ջանքերով կոմունիստական կայսրության եւ Գերմանիայի միջեւ է՛լ աւելի սրուած հակամարտութիւնը դարձաւ պատերազմ: Արդի ռուսական պատմագիտութիւնը բազմաթիւ գաղտնի պահուող դիւանագիտական վաւերագրերի վրայ հիմնուած 1990-2012 թթ. հազարաւոր յօդուածներով ու մենագրութիւններով հիմնաւորապէս սրբագրել է 70 տարի շարունակ բնակչութեանը մատուցուած բազմաթիւ կեղծիքները, որոնք մինչ այդ Ռուսաստանում երբեք չէին հրապարակուել: Օրինակ՝ այն, որ բօլշեւիկապետ արուամուլ Լենինը ռուս ժողովրդի բոլոր ժամանակների մեծագոյն թշնամին էր, իսկ նրա ու իր հետեւորդների 1917-1955 թ. բռնատիրութիւնը՝ ռուս ժողովրդի ցեղասպանութիւնը, որի ընթացքում «ոչ իրենց բնական մահով» զոհուեցին 87 միլիոն ռուսաստանցիներ, որ երկրորդ աշխարհամարտը ոչ թէ հայրենական պատերազմ էր, այլ բոլշեւիզմ եւ նացիզմի միջեւ աշխարհը բաժանելու ռազմապայքար, որին զոհ է գնացել ոչ թէ 20 միլիոն ռուսաստանցի, ինչպէս նշում է ամենուր, այլ 27 միլիոն եւ այլն, եւ այլն²²: Երկրորդ աշխարհամարտում Խորհրդային Միութեան ղեկավարութիւնն իր բնակչութեանը կոռուի էր տանում սպանելու սպառնալիքով: Բանակ գնալուց հրաժարուելու դէպքերը բացառում էին, քանի որ բանակը կազմալուծելու մեղադրանքով բօլշեւիկները տասնեակ հազարաւոր մարդ գնդակահարեցին միայն այն բանի համար, որ գնդակահարուածներն իբր թէ թշնամուն ջախջախելու պետական քարոզչութեանը անհրաժեշտ եռանդով չէին միացել: Այնպէս որ նոյնիսկ անբուժելի հիւանդութեամբ տառապողի բանակից ազատուելու փորձը ստոյգ գնդակահարութիւն էր ոչ միայն մեղադրողի, այլեւ նրա ամբողջ գերդաստանի համար: Իսկ զինուորին կոռուի դաշտեր էին քշում այսպէս. յատուկ ջոկատները գնում էին կոռուող զօրքի յետեւից, եւ եթէ

մէկը փորձէր յետ ընկնել, անմիջապէս գնդակահարում էին: Զինուորին թողնելով թշնամու եւ իւրային կոչուած պատժիչ զօրամասերի կրակոցների արանքում, սովետները սեփական զինուորին ճակատ էին ուղարկում գնդակահարելու սարսափով, որ եթէ կոռուի ժամանակ նա թշնամու քանակութիւնը կամ ռազմական գերազանցութիւնը տեսնելով յետ նահանջէր, պատժիչ զինուորից անպայման պիտի սպանուէր: Ասել է թէ՛ այդ պատերազմը հայրենական յայտարարած **սովետները զինուորին կոռուի դաշտ քշելու քարոզչութիւն, խթան եւ լծակ էին դարձրել գնդակահարելու սարսափը**, այսինքն՝ սովետները սեփական զինուորի հետ վարում էր իբրեւ անասունի՝ բացարձակապէս չմտածելով զինուորականի կեանքը խնայելու մասին: Դա վերաբերում է նաեւ բարձրագոյն հրամանատարներին, որոնց պատերազմի նախօրէին Ստալինը գրեթէ իսպառ ոչնչացրեց: Բերեմ ռուսական պատմաբանների անհաւատալի թուացող, բայց դիւանական ստոյգ տուեալներից ու փաստերից մի քանիսը:

Երկրորդ աշխարհամարտի սկզբից վեց ամիս առաջ, 1937 թ. հունուարից մինչեւ 1938 թ. հոկտեմբերը, երկու տարուց էլ պակաս **ժամանակում**, սովետական զօրքերի՝ **միայն բարձրագոյն հրամանատարութիւնից բանտարկուեց, մեծամասամբ գնդակահարուեց 40 հազար հրամանատար՝ մարաջախտից (մարշալ) մինչեւ գնդապետ**: Սովետական Միութեան բարձրագոյն հրամկազմում ընդգրկուած էին երկրի բարձրագոյն զինուորական կոչում ունեցած **բոլոր 5** մարաջախտները եւ զինուորական կոչումի բարձրութեամբ մարաջախտից յետոյ երկրորդը համարուող բանակի **8** հրամանատարները, որոնց կոչում էին բանակի առաջին կարգի հրամանատար: 1937-1938 թթ. ընդամենը 5 մարաջախտից գնդակահարուեցին երեքը, իսկ բանակի 8 առա-

ջին կարգի հրամանատարներից՝ **չորսը**: Սովետական բանակում եղած ռազմածովային ուժերի երկրորդ կարգի 7 բարձրագույն հրամանատարներից գնդակահարուցել են **վեցը**: Բանակի երկրորդ կարգի 10 բարձրագույն հրամանատարներից գնդակահարուցել են **բոլոր** տասը, Բանակային 15 **կոմիսարներից** (գաղափարական գծով հրամանատարներ) եւ **կորպուսի 67 հրամանատարներից** գնդակահարուցել են բանտարկուցել են 60-ը: Կորպուսների եւ դիվիզիաների 92 կոմիսարներից բանտարկուցել են գնդակահարուցել են 83-ը, դիվիզիայի 186 **հրամանատարներից** բանտարկուցել են գնդակահարուցել են 154-ը: Սովետական բանակում առկա բրիգադի 397 **հրամանատարներից** բանտարկուցել են գնդակահարուցել են 221-ին: Գնդակահարուցել են պաշտպանութեան նախարարի բոլոր 11 տեղակալները, «Ռազմական օկրուգների» բոլոր գերագույն հրամանատարները եւ Ռազմական գերագույն խորհրդի 80 անդամներից 75-ը, նաեւ կայսրութեան բարձրագույն ղեկավարությունը կազմող Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտեի 131 անդամից 98-ը: «Հակալեռայնության գործունեություն ծաւալելու» մեղադրանքով ձերբակալել են 1939 թ. կայացած կոմունիստների 18-րդ համագումարին հինգ տարի առաջ ներկայացած երկու հազար պատգամաւորներից 1100-ին²³:

Բռնապետությունների համաշխարհային պատմությունը չի կարող բերել մի երկրորդ օրինակ, երբ որեւէ բռնապետություն իր բնակիչների եւ գինուորականութեան այս չափերի սպանդ ու նախնիր իրականացրած լինէր: Այս պատճառով էր Գաբեգին Նժդեհը դեռեւս 1920-1930-ական թթ. տուել բոլշեիկեան Ռուսաստանի բացառիկ ճշգրիտ եւ ընդհանրական սահմանումը՝ **դիւապետություն**:

Բացարձակ կեղծիք է նաեւ այն պնդումը, թէ իբր երկ-

րորդ աշխարհամարտում դաշնակիցների յաղթանակը ապահովել է բացառապէս Սովետական Միութիւնը: Իրականութիւնը հետեւեալն է. երկրորդ աշխարհամարտի առանցքային ճակատը սովետա-գերմանականն էր: **Այդ ճակատում Մեծ Բրիտանիան ու յատկապէս ԱՄՆ-ը 1942 թ. վերջերից սկսած՝ Գերմանիային յաղթեցին ճակատամարտ քշուած սովետական զինուորներով**: Սովետական Միութիւնը Գերմանիա-Սովետական Միութիւն ճակատին մատակարարում էր մահապարտ զինուոր ու զինամթերք, իսկ արեւմուտքը ԱՄՆ գլխաւորութեամբ՝ կերակուր, հագուստ, ռազմական սարքեր եւ զինուժ: Այսպէս, ԱՄՆ-ն Սովետական Միութեանը տուեց այն ժամանակների համար գերադասական 427 284 բեռնատար, 50 501 ՋԻՊ կոչուող մարդատար, 595 նաւ, 105 սուզանաւ, 3 սառցահատ, սուզանաւ ոչնչացնող 104 հաժանաւ, 13 303 զրահամեքենա, 35 041 ռազմական մոտոցիկլ, 11 155 երկաթուղային վագոն, 136 000 տոննա պայթուցիկ, երեք միլիոն 820 906 տոննա զանազան մթերք՝ իւղ, երշիկեղէն, շոկոլատ եւ այլն, երկու միլիոն 541 008 տոննա նաւթ ու նաւթամթերք, երկու միլիոն 317 694 տոննա պողպատեղէն, տասնհինգ միլիոն 010 900 գոյգ զինուորական կօշիկ, 9681 ռմբակոծիչ օդանաւ, 166 699 տոննա ալիւմինի համաձուլուածք եւ 624 տոննա ալիւմինե թիթեղ, 69 միլիոն քառակուսի մետր բրդեայ կտորեղէն, ռազմատոմեքենայի երեք միլիոն 700 000 անադող, 8218 զէնիթային եւ 5815 հակատանկային թնդանոթ, 8701 ռազմական տրակտոր, 473 միլիոն հրանոթային արկ, տասնեօթ միլիոն 500 000 տոննա ռազմավարական նիւթերով 2660 բեռնանաւ եւ այլն: Իսկ Մեծ Բրիտանիան սովետին տուել էր 115 ռազմանաւ, 4 սուզանաւ, ամսական 2000 տոննա ալիւմին, որը զրահատանկ արտադրելու հիմնական մետաղն էր եւ այլն²⁴: Կեղծիք է սովետական գիտնականների աւելի քան 70 տարի

անընդհատ թմբկահարող այն պնդումը, թե 1941 թ. յունիսի 22-ին սկսուած գերմանա-սովետական պատերազմին Սովետական Միութիւնն իբր պատրաստ չէր, թոյլ էր եւ իբր Գերմանիան ունէր զինուժի եւ սպառազինութեան վիթխարի առաւելութիւն: **Իրողութիւնը ճիշտ հակառակն է.** Ստալինը 1920-ական թթ. սկսած մինչեւ 1940 թ. յունիս ամիսը «Համաշխարհային յեղափոխութեան յաղթանակի» անուան տակ ծրագրել էր Եւրոպայի վրայ յարձակումով սկսել աշխարհակալ պատերազմ, իսկ 1931 թուականից կայսրութիւնը փաստօրէն ղեկավարում էր պատերազմական օրէնքներով եւ ամբողջ երկիրը վերածել էր զէնք-զինամթերքի գործարանի: Մի քանի օրինակ. պատերազմին իբր թե ոչ պատրաստ սովետ զօրքերի թիւը 1937 թ. մէկ միլիոն 100 հազարից 1938 թ. վերջին հասաւ մօտ հինգ միլիոնի, իսկ 1941 թ. յունիսի 22-ին՝ հինգուկէս միլիոնի: Երբ սկսուեց գերմանա-սովետական պատերազմը, **հենց առաջին իսկ մէկ շաբաթում զօրակոչուեց եւս հինգ միլիոն 300 հազար մարդ եւ Ռուսաստանի զօրքերի թիւը,** բացի գաղտնի ու սովորական ոստիկանութիւնում ծառայող աւելի քան մէկ միլիոնից, **հասաւ 11 միլիոնի**²⁵:

1941 թ. յունիսի 22-ին Սովետական Միութիւնը գերմանացիների հանդէպ ունէր նաեւ զէնք-զինատեսակի վիթխարի առաւելութիւն: Տանկերի թով սովետները Գերմանիային գերազանցում էին 7 անգամ (պատերազմի սկզբին սովետների 24 հազար տանկի դիմաց գերմանացիները ունէին 3300 տանկ), իսկ ոմբակոծիչ օդանւերի քանակով՝ չորս անգամ (սովետների 10 հազար օդանւի դիմաց գերմանացիները ունէին 2500 օդանւ): Սովետները 1941-1944 թթ. զինուորների քանակով Գերմանիային գերազանցում էին մօտ չորս անգամ (Գերմանիան 1939 թ. սեպտեմբերի 1-ին ունէր չորս միլիոն երեք հարիւր հազար զօրք, որոնցից Սո-

վետական Միութեան դէմ հանեց մօտ երեք միլիոնը, մնացածը պահում էր Եւրոպայում, Մերձաւոր Արեւելքում, Յիւսիսային Աֆրիկայում եւ այլուր): Հիմնուելով դիւանագիտական փաստաթղթերի վրայ, ռուս արդի պատմաբանները ապացուցում են, որ ռազմական այս վիթխարի առաւելութեան իսկ պայմաններում պատերազմի առաջին իսկ **ծամերից սովետական բանակը վերածուել էր փախստականների կոյտերի:** Այսպէս՝ Բելոռուսիայի եւ Ուկրաինայի հաւաքակայաններ չը ներկայացան 5 միլիոն 631 հազար զինակոչիկ: Պատերազմի առաջին երկու շաբաթներին գերմանացիները ոչնչացրեցին սովետների 4000 տանկ, գերեւորեցին **մօտ երեք միլիոն ութ հարիւր հազար** զինուոր եւ սպա, **63 զօրավար (գէներալ):** Բանակից փախածներից գերմանական բանակին էին միացել առնուազն 40 հազարը, նաեւ տասնեակ օդաչուներ՝ իրենց կործանիչներով հանդերձ: **Միայն պատերազմի առաջին վեց ամիսներին** գերմանացիները գերեվարեցին եւ ջարդեցին սովետական **ուր ու կէս միլիոն զինուորականի,** որոնցից 56-62 տոկոսը կազմում էին ճակատից փախածներն ու գերիները, **երկու միլիոն 100 հազարը** (ամբողջ կորուստների 25 տոկոսը)՝ սպանուածները եւ վիրաւորները, իսկ գերիները՝ **երեք միլիոն ութ հարիւր հազար** զինուոր եւ սպա (ամբողջ կորուստների 45 տոկոսը), որից **երկու միլիոն 343 հազարը՝** բանակից փախածներ: Դրանից յետոյ գերմանական հրամանատարութիւնը 1941 թ. սեպտեմբերին Կիւեի, իսկ 1942 թ. գարնանը Խարկովի մօտ իրականացրեց պատերազմների համաշխարհային պատմութեան ամէնակործանիչ գործողութիւնը: Գերմանիան սովետների զօրքը առնելով աննախադէպ շրջապատումի մէջ, գլխովին ջախջախեց: Ռժեի մօտ ակցացուեց եւ ոչնչացուեց սովետների 33-րդ բանակը (հրա-

մանատար՝ գեներալ լեյտենանտ Եֆրեմով), Վլասովի 2-րդ «հարուածային բանակը», Ղրիմի 44, 47, 51-րդ բանակները, Խարկովի մօտ Ճակատող 6, 9, 28 եւ 57 բանակները, 7 տանկային եւ «կաւալերային» կորպուսները, բազմաթիւ դիւիզիաներ, բրիգադներ եւ գնդեր: **Սովետները 1941 թ. հունիսի 22-ից մինչեւ 1942 թ. մայիս ամիսը կրեցին պատերազմների համաշխարհային պատմութեան ամենաահարկու եւ աղէտալի պարտութիւնը:** 1941 թ. սեպտեմբեր-1942 թ. գարուն ամիսներին գերելարուեցին եւս մօտ 300 հազար սովետական զինուորական, զոհուեցին աւելի քան 100 հազարը: Մինչդեռ 1942-1944 թթ. գերմանացիներից գերի էին ընկել 17 285 զինուորական, իսկ սովետական զօրքին էին միացել ընդամենը 29 գերմանացի... Ահա թէ ինչու էին այս ամենին տեղեակ **միայն մի քանի** սովետական բարձրագոյն հրամանատարները իրենց առաջնորդ Ստալինի հետ միասին 1941-1942 թթ. սարսափում Հիտլերից եւ եօթ փակի տակ պահում այս տուեալները²⁶:

Խորհրդային Միութիւնում բնակող **երկու միլիոն 152 860 հազար հայերից** Երկրորդ աշխարհամարտին Հայաստանից մասնակցել է մօտ 500 հազարը, իսկ 150 հազարից աւելի հայորդիներ էլ բանակ են գնացել կայսրութեան այլ վայրերից, հիմնականում՝ Այսրկովկասից: Այդ 650 հազարից զոհուել է աւելի քան 250 հազարը՝ չհաշուած մարտերին մասնակից հազարաւոր այն զինուորականները, ովքեր գերի ընկած լինելու եւ այլ մեղադրանքներով պատերազմից յետոյ բանտարկուեցին եւ քշուեցին Սիբիր²⁷: Կոմունիստական կայսրութիւնը գերմանա-ռուսական պատերազմում բնաջնջել է նաեւ հայերին: Օրինակ՝ «ազգային» անունանումով կազմուած զօրամասերից Հայկական կոչուող զօրամասերին Ղրիմ եւ այլուր կոտորելու քշելը եւ այլն: Առայժմ չը ճշգրտուած մօտաւոր տուեալներով 100 հազար

բնակչին ընկնող տուեալներով հայերից բանակ զօրակոչուածները, կռիւներում զօհուածները, բանտարկուծները եւ գնդապահարուածները կրկնակի-եռակի աւելին էին, քան կայսրութեան ամբողջ բնակչութեանն ընկնող միջին բանակը:

Հայերը 100 հազար բնակչին ընկնող տուեալներով կայսրութեան բազմաթիւ ազգերի գերազանցում են նաեւ հերոսների, բարձրագոյն հրամանատարների գծով: Այսպէս, սովետական բանակից «Մարտական ծառայութեան համար», «Արիութեան համար» եւ այլ մեդալներով պարգեատրուել է 66802 հայ, 49106 վրացի, 38180 Կովկասի թաթար-ադրբէյ-ջանցի: Հայերը Բ աշխարհամարտում Սովետական Միութեան բանակին տուել են 68 զօրավար-գեներալ, որոնցից 4-ին շնորհուել է մարաջախտի, մեկին՝ ծովակալի կոչում: ԽՍՀՄ բարձրագոյն պարգեւի՝ Սովետական Միութեան հերոսի կոչում է ստացել սովետական բանակի 11635 զինուորական, որոնցից 8182 ռուս, 2072 ուկրաինացի, 311 բելոռուս, 161 թաթար, 103 հայ (հայերից այդ պարգեւին են արժանացել 110 հոգի, որոնցից 4-ը ստացել են սովետա-ֆիննական պատերազմին, 3-ը՝ յետպատերազմեան շրջանում), 89 վրացի, 43 ադրբէյջանցի: 23 հայ ուներ ԽՍՀՄ բանակի Փառքի բոլոր երեք բարձրագոյն շքանշանները, որոնց արժանանալը գրեթէ հաւասարազօր էր ԽՍՀՄ հերոսի կոչումին: ²⁸

Բ աշխարհամարտին դաշնակիցների բանակներում եւ դիմադրական կռիւներին Գերմանիայի դէմ մարտնչում էին նաեւ հայեր: Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի բանակներում կուում էր 30 հազար հայ, 20 հազար հայ զինուոր ուներ ԱՄՆ բանակը: Հայերը գործուն մասնակցութիւն են բերել նաեւ Ֆրանսիայի, Իտալիայի, Յունաստանի, Չեխոսլովակի, Բուլղարիայի, Լեհաստանի եւ այլ երկրների դիմադրական կռիւներին, տուել յայտնի հերոսներ:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵԼ Է ՄԻՆՉԵՒ 1953 Թ.

1943-1944 թթ. ու յատկապէս պատերազմի աւարտից յետոյ կայսրութեան ժողովուրդների աքսորի ու հայրենագրկման անունը այդ տարիներին դնելով **վերաբնակեցում**, Ստալինը ամբողջ կայսրութիւնով մէկ վերսկսեց նաեւ համատարած ձերբակալութիւններն ու գնդակահարութիւնները, որ մասամբ դադարեցրել էր 1941թ. յունիսի 22-ից մինչեւ 1942 թ. վերջը, երբ Գերմանիայից կրելով ջախջախիչ պարտութիւն, հնարաւորութիւն չէր ունեցել շարունակելու սեփական բնակչութեան նախճիրը: Այդ տարիներին գերմանացիները փաստօրէն Սովետական Միութեան բնակչութեանը երկու տարով յետ պահեցին այն բռնութիւններից, որ բոլշեւիկները աննախադէպ չափերով շարունակում էին 1936-1937 թթ. ի վեր: Որքան էլ անհաւատալի թուա, որ սովետական կայսրութեան բնակչութեան հանդէպ իրականացող պետական սահաբեկչութիւնը նուազագոյնի հասաւ սովետների դէմ գերմանացիների 1941-1942 թթ. յաղթանակների շնորհիւ, դա՛ են ցուցանում փաստերը: Երբ ԱՄՆ եւ դաշնակիցների վճռական օժանդակութեան շնորհիւ 1942 թ. վերջերից կասեցուեց կայսրութեան ջախջախումը, Ստալինը անմիջապէս վերսկսեց համատարած աքսորն ու ջարդը: Այսպէս. «գաւթիչների հետ համագործակցելու» մեղադրանքով 1943 թ Միբիր եւ Միջին Ասիա աքսորուեց աւելի քան 68 հազար կարաչայ, 93 հազար կալմիկ, 1944 թ. նոյն մեղադրանքով Միբիր եւ Միջին Ասիա աքսորուեցին մօտ մէկ միլիոն չէչէն եւ ինգուշ, 37 հազար բալկար, 183 հազար Ղրիմի թաթար: 1945-1950 թթ., «կուլակներ եւ բանդիտներ» անուանելով Միբիր եւ Հեռաւոր Արեւելք աքսորեցին Արեւմտեան Ուկրայի-

նայի եւ Մերձբալթիկայի 100 հազարաւոր ընտանիքների²⁹։ Հայաստանից զանգուածային արտաքսումը վերսկսուեց 1948 թ., երբ հիմնականում «գիւղատնտեսութեան մեջ աշխատելուց չարամտօրէն փոսափելու, պորտաբոյծ կեանք վարելու» մեղադրականներով արքտրում էին մեծամասամբ հայ գիւղացիութեանը։ Որպէս վերաբնակեցման վայր, Ստալինը «դաշնակների», այն է՝ հայերի համար նոր հայրենիք էր հռչակել Ալթայը, թուրքերի համար՝ Տոմսկի մարզը, յոյներին գաղթեցնում էր Ղազախստանի Ջամբուլի մարզը եւ այլն։ Այսպիսով՝ քանի որ Բ աշխարհամարտը բռնկուելու պատճառով սովետները Հայաստանի հայաթափումը 1930-ական թուերի վերջերին չկարողացան աւարտել, դա վերսկսեցին պատերազմի աւարտից անմիջապէս յետոյ։ Նպատակը Հայաստանը հայերից դատարկելով, Սովետական կոչուող Հայաստանի լուծարումն ու Հայաստանը այլ անունով կոչելն էր։ Որ նպատակը, իրօք դա՛ էր, հաստատում են փաստերը։ 1948 թ. սեպտեմբերի 14-ին կառավարութիւնը Ստալինին զեկուցում է, որ «անյապաղ եւ անմիջապէս դադարեցնում է հայերի ներգաղթը Հայաստան, արգելում է նրանց մուտքը Հայաստան»։ Այսինքն, որպէսզի Հայաստանում հայերի թիւը չաւելանար, հայրենադարձութիւնը դադարեցնում է՝

* Ոմանք դա բացատրում են նրանով, որ Ստալինը հայերի հայրենադարձությունը սկսել էր, որպեսզի հիմնաւորի 1920 -1921 թթ. Թուրքիայի գալթած Արեւելեան Հայաստանի որոշ տարածքների կցումը Սովետ - Միութեանը: Ըստ պաշտօնական տունալների, 1947 թ. հայրենադարձների ժխիւր 35 հազար էր, իսկ 1946-1948 թթ. Հայաստան էին եկել մօտ 90 հազար հայրենադարձ, որոնց մի մասին աքսորեցին Ալթայ: Ի դէպ, հայրենադարձների վիճակը սոսկալի էր, հարիւրատր ցնտանիքներ տուն չունէին կամ մէկ սենեականոց փոքր կացարանում ապրում էին 10-15 շունչ: Իսկ շատերն էլ գիշերում էին բաց երկնքի տակ, մեռնում էին սովից ու հիւանդութիւններից՝ երազելով յետ գնալ իրենց երկրները կամ փախչել ուր

Երկրորդ. Ստալինը պատերազմից անմիջապես յետոյ հանրառօրէի էր տալիս հետեւեալ քարոզչութիւնը. Սովետ Միութիւնը հայկական հարցը լաւագոյնս լուծելու համար Ալթայում նոր Հայաստան կառուցելու համար ընդարձակ հողամաս է յատկացնում: Հասկանալի է, որ եթէ Հայաստան անունը տեղափոխուում է Ալթայ, նախկին Հայաստանը չէր կարող դարձեալ կոչուել հին անունով, քանի որ Սովետական Միութիւնում երկու Հայաստան չէր կարող լինել: Հետեւաբար՝ անուանափոխելու համար Սովետական Հայաստանի տարածքը պէտք է բաժանուէր Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ, որի իրաւաբանական-դիւանագիտական հիմքերը Բոլշեւիկները գցել էին դեռեւս 1918-1921 թթ.: Այդ հիմքը Ջանգեզուրը Ադրբեջանին յանձնելու մասին Հայաստանի Հանրապետութեան եւ Սովետական Ռուսաստանի միջեւ 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Հայաստանին պարտադրուած պայմանագիրն էր, որը **անպայման պիտի նոյն արագութեամբ կենսագործուէր**, ինչ արագութեամբ որ եղաւ Արցախի, Ջաւախքի եւ Նախիջեւանի դէպքում, **եթէ չլինէր Գարեգին Նժդեհի հրաշամարտը հողակողոպուտի դէմ**: Իսկ հիւսիսային Հայաստանն էլ այսօրուայ Վանաձոր կենտրոնով, Ստալինը 1949 թ. պէտք է տար Վրաստանին՝ դարձեալ կենսագործելով Բոլշեւիկների ծրագիրը, որի բեկանողն էլ Դրօն եղաւ, որը 1920 թ. դեկտեմբերի վերջին Բոլշեւիկների սարքած վրաց-հայկական պատերազմում վրացիներին հալածելու էր մինչեւ Թիֆլիս, եթէ Ռուսաստանի ջանքերով անգլիացիները կռուող երկրներին չը հաշ-

հնարատու է: 1947-1948 թթ սահմանից գաղտնի փախչելու փորձերը դարձան սովորական: 1948 թ. փախչել յաջողուեց միայն մօտ 20-23 հոգու, մնացածներին կալանում-աքսորում էին Ալթայ: Օրինակ՝ 1946-1947 թթ. Սահմանի վրայ ձերբակալել են փախչել չը յաջողած 286 հայրենադարձի³⁰:

տեցնեին... 1949 թ. ծրագրուած հողաբաշխումից Հայաստանին եր մնալու չնչին տարածք, Արարատեան դաշտը, մի քիչ էլ այլ տարածքներ, որոնց հարցը լուծելը շատ անելի դիւրին էր: Այդ տարածքները իբրեւ ինքնավարութիւն, տրուելու էին Հայաստանի որոշ փոքրամասնութիւնների՝ դրանք նոյնպէս կցելով Ադրբեջանին եւ Վրաստանին...

Սովետական Հայաստանը հայագրկելը եւ Հայաստան անունը սովետական քարտեզներից ջնջելը մի քանի միլիոն ընտանիք տեղից-տեղ փոխադրած **Ստալինի** համար լիովին իրագործելի էր։ Հրապարակուած պաշտօնական տուեալներով, **սովետները ընդամենը մէկ օրուայ ընթացքում**, 1949 թ. յունիսի 13-ի յոյս 14-ի գիշերը, Հայկական ԽՍՀ-ից, Ադրբեջանական ու Վրացական ԽՍՀ-ներից, նաեւ Մեծ ծովի առափնեայ շրջաններից **Ալթայի անմարդաբնակ սառցաստաններ արքարեցին 15 հազար 500 հայի**, որից 2754 ընտանիք կամ 12000 մարդ՝ Հայաստանից, աւելի քան 3000 մարդ վերը նշուած տարածքներից³¹։ Տասը տարուց էլ պակաս ժամանակում նրանք Հայաստանից Ալթայ կուղարկեին առնուազն **կէս միլիոն** հայի, որը լիովին բաւական էր Ալթայում նոր Հայաստան սարքելու համար։

Այդ օրերին Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Զ Չորեք-
չեանը Ստալինին հարց էր տալիս. իսկ Արարատ լե՞ռը եւ ս.
Էջմիածի՞նը ինչպէս պիտի տեղափոխուի նոր Հայաստան...
Միայն աստուծոյ կամօք չիրականացուեց Հայաստանի

* Հայաստանը առանց հայերի ծրագրով հայերի գաղթը Հայաստանից Միբիր եւ այլուր, իր դեսպանատան միջոցով եւ այլ խողովակներով այսօր **պետականօրէն** իրականացնում է նաեւ Հայաստանի ճորտամիտ դեսպարութեան կողմից «ռազմավարական դաշնակից» յայտարարուած կապարութեան կողմից «ռազմավարական դաշնակից» յայտարարուած Միարդի Ռուսաստանը: Ըստ իս, 1992-2011 թթ. ընթացքում Հայաստանից Միբիրի հողամասեր եւ Ռուսաստանի այլ վայրեր են գաղթել մօտ կէս միլիոն հայ:

ամբողջ բնակչությանը Ալթայ քշելու ծրագիրը, որը այս անգամ էլ ի չիք դարձաւ 1953 թ. Ստալինի սատակումով ... 1949 թ. ապրիլ-յունիս ամիսներին արձակած պետական գաղտնի հրահանգներում նշուած է, որ պետանվտանգութեան մարմինները «դաշնակցական-ազգայնականներին» Ալթայ պիտի արտրեն ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնից, այլ նաեւ ԽՍՀՄ-ի քան մէկուկէս միլիոն հայ բնակչութիւն ունեցող Կովկասից, մասնաւորաբար Վրաստանից եւ Ադրբեջանից: Սահմանափակ քանակութեան փաստաթղթերի վրայ հիմնուելով, մասնագետները հաշուել են, որ 1940-1953 թթ. Հայաստանից արտրուել, մեծամասամբ գնդակահարուել են 21 հազար հայ, 1930-1940-ական թթ.՝ 18 000, 1936 թ. կէսերից մինչեւ 1938 թ.-ի կէսերը՝ Հայաստանից բռնադատուել է 7500 մարդ, որից 4600-ը գնդակահարուել է, 2900-ը ուղարկուել է Սիբիրի արտրավայրեր ու ճամբարներ, 1947-1952 թթ. Հայաստանում դատապարտուել է 8222 մարդ: Ընդհանուր առմամբ այդ սուղ տուեալներով, 1930-1953 թթ. Խորհրդային Հայաստանից արտրուել է 42000 մարդ, որոնց մեծ մասը գնդակահարուել է³²:

Այս տուեալները խիստ պակասաւոր են: Արտրներին եւ կոտորածներին վերաբերող վաւերագրեր-փաստաթղթերը չափազանց քիչ են պահպանուել, քանի որ որպէս գերվտանգաւոր նիւթեր, ոչնչացւում էին: Առկայ թուերին հարկ է յաւելենք կայսրութեան այլ վայրերում բռնադատուած այն հայերին նոյնպէս, որոնց ազգութիւնը թէեւ չի նշւում, բայց տրամաբանօրէն նրանք հայեր են: Այդ փաստաթղթերից մէկը 1949 թ. մայիսի 29-ին Ստալինի ստորագրած «Վրացական, Հայկական եւ Ադրբեջանական ԽՍՀ-ներից, ինչպէս նաեւ Սեւ ծովի առափնեայ տարածքներից արտաքսուածների տեղափոխութեան, տարաբնակեցման եւ աշխատանքի

տեղաւորման ապահովման մասին» գրութիւնն է: Փաստաթղթում հիմնականում երեք ազգութիւն է նշւում՝ յոյն, թուրք եւ «դաշնակցական, որը անկասկած, նշանակում է հայ: Փաստաթղթում կան նաեւ «յունահայատակ» եւ «թուրքահայատակ» հասկացութիւնները, որոնք հարկաւ Յունաստանից եւ այլ երկրներից ներգաղթած սփիւքահայերն են, որոնց սովորաբար կոչւում էին «թուրքահայեր»: Այդ նամակի մէջ է Ստալինը «դաշնակցականների» վերաբնակեցման վայրը նշում Ալթայը³³:

Թէեւ կայսրութեան պատժիչ փաստաթղթերում սովորաբար ազգութիւն գրեթէ չի նշուել, սակայն 1945-1953 թթ. պատժիչ հրամանագրերն ու գործողութիւնները վերաբերում էին նաեւ գերմանացիներին: Եթէ պատժի ենթակայ հայերին պաշտօնագրերում անուանում էին «դաշնակցական-ազգայնականներ», ապա գերմանացիներին՝ «ֆալստ-հիտլերականներ»: Այդ մեղադրանքով 1941 թ. Պովոլշիստ-հիտլերականներ»: Այդ մեղադրանքով 1941 թ. Պովոլշից Սիբիր եւ Ղազախստան արտաքսեցին ԽՍՀՄ-ի քան միլիոն գերմանացի: Որոշ աղբիւրներում ձեռքակալուած եւ «հակայ» յայտարարուած կոմունիստների քանակը նշուել է «հակայ» յայտարարուած կոմունիստների քանակը նշուել է, որ 1935-նաեւ ըստ ազգութիւնների: Դրանցից պարզւում է, որ 1935-1938 թթ. զանգուածօրէն ձեռքակալուածների 43 տոկոսը հրէաներն էին, որոնք պաշտօնական տուեալներով կազմում էին երկրի բնակչութեան հազիւ 3 տոկոսը: Երկրորդ եւ երրորդ տեղը այդ տուեալներով զբաղեցնում էին հայերն ու վրացիները, որոնց ընդհանուր քանակը թէեւ, կազմում էր Սովետական Միութեան բնակչութեան մօտ երկու տոկոսը, բայց ձեռքակալուածների մէջ նրանք կազմում էին բոլոր դատուած կոմունիստների 27 տոկոսը: Ասել է թէ՛ քանակով Սովետական Միութեան ամբողջ բնակչութեան ընդամենը հինգ տոկոսը կազմող երեք ազգերը՝ հրէաները, հայերն ու

վրացիները, կայսրութիւնում որակապէս 70 տոկոս կշիռ ունեցող դեր են ունեցել: Ընդ որում, աղբիւրը նշում է, որ այդ 70 տոկոսը վերաբերում է թե՛ երկրի ղեկավարութեան մեջ մաս կազմելուն եւ թե՛ բանտարկուածներին: Այսինքն՝ հրէաները, հայերը եւ վրացիները կազմում էին նաեւ կայսրութեան ղեկավարութեան 70 տոկոսը³⁴:

Յայտնի է, որ պատմագիտութիւնը Հայոց ցեղասպանութիւնը երեք փուլի է բաժանում: Առաջին փուլը 1894-96 թթ. սուլթան Համիդի իրականացրած 300 հազար արեւմտահայերի կոտորածներն էին: Երկրորդ եւ հիմնական փուլը համարում են 1915 թ. ապրիլի 24-ից (հին տոմարով՝ ապրիլի 11) սկսուող 1915-1918 թթ. կոտորածները, որին ընդունուած կարծիքով զոհ է գնացել մօտ մէկուկէս միլիոն (թուրքական որոշ աղբիւրներ հայոց զոհերի թիւը 1919 թ. նշում էին 800 հազար): Երրորդ փուլը նշում է 1919-1922 թթ., երբ երիտթուրքերը հայազրկեցին Կիլիկիան, Զմյուռնիան ու այլ տարածքներ, իսկ 1920 թ. սեպտեմբերի 22-ին յարձակուելով Հայաստանի Հանրապետութեան վրայ, բօլշեւիկների հետ միասին հայաթափեցին Կարսը, Իգդիրը, Ալեքսանդրապոլը եւ Շիրակի դաշտը³⁵:

Իրողութիւնը, սակայն, ըստ հաւաստի բազմաթիւ փաստերի ու տուեալների, հետեւեալն է. **հայերին ոչնչացնելու ծրագիրը առաջինը պետականօրէն Ռուսաստանը սկսեց՝ 1885 թ. կովկասի կառավարիչ Գուլիցինի բերանով հրապարակելով. «Ես կհանգստանամ այն ժամանակ միայն, երբ Թիֆլիսի թանգարանում ցուցադրեն հայի խրտվիլակը՝ ի հաստատումն այն փաստի, որ Կովկասում ինչ որ ժամանակ բնակուելիս են եղել նաեւ հայեր»:** 1891 թ. փետրուարի 12-ին Պետերբուրգում թագաւորի գումարած «Հայկական գործերի բարձր մակարդակի ժողովը» հռչակեց Հա-

յաստանեայց եկեղեցու եւ հայոց դպրոցների դէմ ձեռնարկելիք բազմապիսի հալածանքներ սահմանող պետական օրէնքը: Օրէնքն ունէր «Հայ եկեղեցականներին վարչական կարգով աքսորելու», «Հայ ազգութիւնը հետզհետէ կայսրութեան տիրապետող բնակչութեանը ձուլելու...», «Դպրոցական հարցում ձգտել եկեղեցական-ծխական դպրոցները... ամբողջովին ենթարկել ուսումնական վարչութեանը» յատուկ կէտեր³⁶:

1894-1896 թթ. կոտորածով եղեռնին միացաւ սուլթանական Թուրքիան: Սուլթան Աբդուլ Համիդը 1890 թ. առաջին կէսին հայերի կոտորածները կազմակերպելու համար ամենուր սարքել տուեց հիմնականում քրդերից կազմուած «Համիդէ» զօրախմբեր, որոնք 1894-96 թթ. յարձակում էին հայկական գիւղերի վրայ, տները կողոպտում, այրում էին, իսկ բնակիչներին՝ կոտորում: Ժամանակի գործիչները փաստերով արձանագրում են, որ Ռուսաստանը արեւմտահայութեանը բնաջնջող սուլթանին Պոլսում իր դեսպանի միջոցով յորդորում էր . *Massacrez, Majeste' , massacrez , Majeste' («Կոտորեցէ՛ք, ձերդ մեծութիւն, կոտորեցէ՛ք»)*...

Թուրքերի կողմից 1909 թ. Ադանայի 30 հազար հայերի կոտորածից յետոյ, 1915-1918 թթ. իրականացուեց Հայոց մեծ եղեռնի հիմնական փուլը, որի ընթացքում ընդունուած կարծիքի համաձայն, կոտորուեց մօտ մէկուկէս միլիոն հայ: Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան գաղափարախօսութիւնը եւ ծրագիրը կազմած հիմնական դէմքերը աշխարհահռչակ ցեղասպանագէտ Վահագն Տատրեանի կարծիքով, երիտթուրքերի կուսակցութեան Կեդրոնական կոմիտէի երեք ղեկավարներն էին՝ Բեհաեդդին Շաքիրը, Նազըմը եւ Զիա Կեռքալըփը: Քեմալական Թուրքիան Հայոց ցեղասպանութիւնը 1919-1922 թթ. շարունակեց Կիլիկիայում, Զ-

մյուսնիայում եւ այլ վայրերում: Հայոց մեծ եղեռնը, 1921 թ. մինչեւ 1949 թթ. համատարած բռնագաղթը Ալթայ եւ Սիբիր, միայնակ շարունակեց բոլշեիկեան Ռուսաստանը:

Արձանագրեմ նաեւ անհերքելի փաստերի վրայ հիմնուած հետեւեալ իրողութիւնը: Մարդկութեան պատմութեան մէջ որեւէ ժողովրդի դէմ երբեւէ իրագործուած ամենաահաւոր բնաջնջում-հայրենագրկումը՝ 1915-1921 թթ. Հայոց մեծ եղեռն-ԱՐՄԵՆՈՅԻԴԸ, իրենց հիմնած երիտթուրքական եւ բոլշեիկեան կուսակցութիւնների գլխաւորութեամբ Թուրքիայում եւ Ռուսաստանում կազմակերպեցին Յիսուս Քրիստոսին խաչողների հետնորդ մասունսիոնականները՝ այդ յետամնաց եւ բարբարոս երկրների ղեկավարներ Նազըմի, Թալեաթի, Պարվուս-Գելֆանդի, Լենինի, Աթաթուրքի եւ իրենց արիւնակից այլոց գլխաւորութեամբ...

1988-2013 ԹԹ.

1905 թ. Սյարկովկասում Կովկասի թաթարների ձեռքով հայերի կոտորածները կրկնելու նպատակով Կրեմլը հրահրեց արցախեան շարժումը, որը հայութիւնը 1988 թ. փետրուարի 20-ին դուրս գալով համայնամարտի, ազգայնացրեց-դարձրեց ԱՐՅԱԽԱԿԱՆ (շարժումը 1988 թ. փետրուարի վերջին անուանադրեցի Արցախական):

Արցախականը հայոց պատմութեան ամենաբազմա-հայ ազատամարտն էր, որի շնորհիւ սկսուեց մարդկութեան երբեւէ տեսած ամենաահաւոր կայսրութեան քայքայումը եւ նրա տիրապետութեան տակ ընկած Եւրոպայի տասնեակ ազգերի եւ կայսրութեան «Հանրապետութիւններ»-ի անկախութիւնը: Հայութիւնն իր անբաղդատելի այս համայնամարտով քաղաքակրթութեանը ազատագրեց մարդկութեանը 80 տարի սարսափի մէջ պահող կոմունիստական բռնապետութիւնից, կայսրութիւնում արմատաւորեց եւ տարածեց իրաւ ժողովրդավարութեան ու մարդու եւ ազգի իրաւունքների պաշտպանութեան պայքարը, որը բռնապետութիւնում այդպիսի շառաւիղներ եւ տարածում երբեք չէր ունեցել: Դեռեւս մինչեւ Արցախը Հայաստանին վերա-միաւորելու մասին ընդունուած Արցախի մարզխորհրդի 1988 թ. փետրուարի 20-ի որոշումը, Արցախը փաստացի միացել էր Հայաստանին: Նկատի ունեմ Արցախը Հայաստանին միացնելու պահանջներով մարզի բնակչութեան հետմատարած դիմումները Մոսկուային³⁷: Երբ 1988 թ. փետրուարի 20-ի որոշումից ոգեւորուած՝ ժողովրդի մեծ մասը կարծում էր, թէ հարցը լուծուած է, Մոսկուան մերժեց Արցախի օրինական պահանջը: Այդ մերժումից հայութեան

ուշքը շեղելու համար Մոսկուան Ադրբեյջանի Կոմկուսի ղեկավարության հետ 1988 թ. փետրուար-ապրիլ ամիսներին Սումգայիթում, Բաքում, Գանձակում, Նախիջեւանում եւ Ադրբեյջանի միւս հայաշատ վայրերում կազմակերպեց հայերի կոտորածներ³⁸։ **Քանի որ Արցախեան շարժումը հրահրել էր Մոսկուան, ապա շարժման գլխին իր դրած «Ղարաբաղ կոմիտե» կոչուած խմբի ղեկավարների միջոցով վերահսկում էր ազատամարտը**։ Այդուամենայնիւ, Արցախում բոբբոքուածը հայութիւնը վերածեց համահայկական արցախամարտի³⁹։ 1988 թ. նոյեմբերի 22-ին հարիւր հազարաւոր ցուցարարների պահանջով գումարուած Խ. Հայաստանի Գերագոյն Խորհրդի նստաշրջանը Արցախը պետք է յայտարարէր Հայաստանի կազմում։ Սակայն Մոսկուան իր ուղարկած ներկայացուցչի միջոցով ընդհատեց նստաշրջանը։ Գերագոյն Խորհրդի 181 պատգամաւորները, հաշուի չառնելով Մոսկուայի արգելքը, 1988 թ. նոյեմբերի 24-ի հանրահաւաքի պահանջով անտեսեցին արգելքը, վերսկսեցին նիստը եւ **գիշերուայ ժամը երկուսին միաձայն ընդունեցին Արցախը Հայաստանին վերամիաւորելու որոշում**՝ կայսրութեան ղեկավարութեանը յորդորելով վաւերացնել այն։ Կոմունիստ բռնատիրութեան ամբողջ պատմութեան ընթացքում չլսուած-չտեսնուած այս քայլով, որը Հայաստանի պաշտօնական մամուլը չարձանագրեց, իսկ վերջին 20 տարիներին տպագրուած ոչ մի դասագրքում եւ պատմագիտական աշխատութիւնում արձանագրուած չէ, **Սովետական Հայաստանի Գերագոյն Սովետը փաստօրէն անկախացաւ Մոսկուայից**։ Համայն հայութեան սկսած ազատամարտի բռնկումից ինն ամիս յետոյ արձանագրեցինք մեր յաղթանակը մարդկութեանը սարսափի մէջ պահող կո-

մունիստական ամբողջատիրութեան դէմ։ Սովետական օրէնսդիր մարմինը անկախացնելու այս աննախադէպ իրողութիւնը խափանելու համար կայսրութիւնը հենց նստաշրջանի ընթացքում, գիշերը ժամը 24-ին երեւանում եւ Արցախում մտցրեց պարետային ժամ եւ «յատուկ դրութիւն», խում մտցրեց պարետային ժամ եւ «յատուկ դրութիւն», հանրապետութեան ամբողջ իշխանութիւնը յանձնեց կայսրութեան պաշտպանութեան նախարարի նշանակած երեսանի պարետին, այսինքն՝ իշխանութիւնը բռնազաւթեց բանակով։ Յաջորդ օրը ՀՀ Գերագոյն Խորհրդի պատգամաւորները մերժեցին Գերագոյն Խորհրդի նոր նիստով չեղեալ յայտարարելու նոյեմբերի 24-ի նիստի որոշումը։ Մոսկուայի հարկադրանքով ստիպուած եղան փոքրաթիւ կազմով գումարել միայն ՀԽՍՀ Գերագոյն խորհրդի նախագահութեան նիստ, որը եւ անօրինական յայտարարեց նոյեմբերի 24-ի նիստի պատմական որոշումը⁴⁰։

1988 թ. նոյեմբերի 29-ին, ԱԽՄ նախաձեռնութեամբ երկրում գործող հասարակական-քաղաքական-երիտասարդական կառոյցները միասնական նամակ յղեցին ՄԱԿ-ում այդ օրերին ընթացող նստաշրջանին, Եւրախորհրդարանին եւ խնդրելով հրաւիրել Գլխաւոր Ասամբլեայի արտահերթ նիստ՝ քննարկելու եւ վերացնելու ռազմական դրութիւնը, բոլոր միջոցներով կասեցնելու հայերի շարունակող ցեղասպանութիւնը.... Նամակը ստորագրել էին՝

Յուշարձանների պաշտպանութեան «Զանգակատուն» խմբի» անունից՝ Մ. Իսկաջեանը, «Գոյապայքար» երիտասարդական միութեան անունից՝ Վ. Իշխանեանը, ԱԽՄ-ի անունից՝ Մ. Գաբրիելեանը, «Հայ ուսանողութեան դաշինքի» անունից՝ Ն. Յունանեանը, Երեւանի 26 կոմիսարների «Սահմանադրական» կառոյցի անունից՝ Հր. Խաչրջանի «Մաշտոց» միաւորման անունից՝ Ռ. Զուրաբեանը, «Մաշտոց» միաւորման անունից՝ Ա. Ղազարը, «Գոյապահպանութիւն» միաւորման անունից՝ Ա. Ղազարը,

րեանը⁴¹:

Այնուհետեւ Մոսկուան Խ. Հայաստանի պետական մարմնի այդ անգուգադիր որոշումը չեզոքացնելու համար, սեւեռուն ջանքերով վերստին փորձեց Արցախը Մայր հայրենիքին վերամիաւորելու հայութեան պայքարը վերածել հայադրբեջանական զինուած ընդհարումի: Այդ նպատակով Խ. Ադրբեջանի Բաքու, Կիրովաբադ քաղաքներում, Նախիջեւանի երկրամասում եւ հայաշատ այլ վայրերում Ադրբեջանի վարիչների գլխաւորութեամբ ադրբեջանական խուժանի ձեռքով եւ սովետական զօրքերով նոյեմբերի 24-27-ը սկսեց հայերի նոր ջարդեր՝ ապարդիւն ջանքեր թափելով նոյնը սադրել նաեւ հայաստանաբնակ ադրբեջանցիների նկատմամբ: Հայաստանի բնակչութեան քաղաքական հասունութիւնը վիժեցրե՛ց Հայաստանում ադրբեջանցիների կոտորած սարքելու սադրանքները: **Ժողովուրդը 1988 թ. նոյեմբերի 23-ի լոյս 24-ի գիշերը** իրագործած բացառիկ թարմ ու անսպասելի քայլերով **Արցախականը շարունակելու նո՛ր ուղի ցուցանեց**: Հայաստանի խորհրդարանի անկախացումը, այն է՝ խորհրդարանը ընտրութիւններով գրաւելու ռազմավարութիւնը նորութիւն էր ոչ միայն Արցախեան համայնամարտում: **Այդ ռազմավարութիւնը 1989-1990 թթ. օրինակեցին կայսրութեան մերձբալթեան հանրապետութիւնները, ապա՝ Վրաստանը, յետագայում նաեւ Ռուսաստանի Դաշնութիւնը**⁴²:

Ազատամարտի ժողովրդական ռազմավարութիւնը առաւելագոյնս հանրաւորելու համար 1989 թ. ապրիլի 24-ին հիմնեցին Ազգային միասնութեան ուխտ կազմակերպութիւնը՝ հիմնադրման Հռչակագրում յայտարարելով. «Խ. Հայաստանն անկախացնելու ուղեգծով մասնակցել խորհրդարանի (ՀԽՍՀ Գերագոյն Խորհուրդ) ընտրութիւններին եւ ազ-

գային բոլոր հարցերը լուծել Հայաստանի անկախ խորհրդարանով»: «Ազատ Հայք» պաշտօնաթերթի ընթերցողներին յղուած նամակում նշում էր. «Ազգային միասնութեան ուխտը» հայ իրականութեան մէջ առաջին կազմակերպութիւնն է, որը ժողովրդին յորդորեց Խորհրդային Հայաստանի Գերագոյն խորհուրդը կոմունիստական մէնիշխանութիւնից ազատել-ազգայնացնելու եւ ազգային իղձերին հասնելու անկախ Խորհրդարանի որոշումով: Այդ ճանապարհը սկզբում ոչ մի կազմակերպութիւն չընդունեց՝ համարելով անիրագործելի ու արտառոց: Բայց շուտով բոլորն էլ ընդունեցին, իսկ Ղարաբաղ կոմիտէն այն դրեց իշխանութիւնը գրաւելու իր քարոզչութեան հիմքում»⁴³:

Արցախը հայրենիքին անկախ խորհրդարանով միաւորելու ռազմավարութիւնը տիրական դարձնելու մէջ էական դեր ունեցաւ 1989 թ. մայիսի 7-ին հիմնածա կազմակերպութիւնը, որն անուանեցի **Նախախորհրդարան**: Նորահիմն կառոյցին, բացի կայսրութեան յսկողութեան տակ գործող Ղարաբաղ կոմիտէ-ՀՀԿ կոչուած խմբից, միացան Արցախամարտի հայաստանեան գրեթէ բոլոր կառոյցները: **Նախախորհրդարանը հռչակեց՝ բոլորս միանանք, Հայոց խորհրդարանն ազատենք կոմունիստ բռնապետութիւնից** կոչը, իսկ 1989 թ. մայիսի 13-ին ազդարարեց, որ կարճ ժամանակում երկրում անցկացող ընտրութիւններով հիմնելու է ՀՀ անկախ Խորհրդարան: 1989 թ. օգոստոսի 1-ին Նախախորհրդարան մտած եօթ կազմակերպութիւնները քննարկեցին եւ ընդունեցին առաջարկած Հռչակագիրը, կառոյցի նախագահ ընտրեցին դոկտոր-պրոֆ. Ֆելիքս Սաֆարեանին: 1989 թ. հոկտեմբերի 1-ին լոյս տեսաւ Նախախորհրդարանի «**Հայոց խորհրդարան**» պաշտօնաթերթը: Հանրութեան մէջ արդէն մեծ յեղինակութիւն ունեցող Նախա-

խորհրդարանը 1989 թ. սեպտեմբերի 10-ին, 24-ին, հոկտեմբերի 11-ին եւ նոյեմբերի 12-ին Օպերայի հրապարակում անցկացրեց զանգուածային հանրահաւաքներ: Մեր ծաւալուն քարոզչութեան շնորհիւ Նախախորհրդարանի օրինակով 1989 թ. օգոստոսի 16-ին Արցախում հիմնուեց Ազգային Խորհուրդ: Յաջորդ օրն իսկ բնակչութեանը եւ հանրային-քաղաքական ուժերին ուղղած Յորդորակով Հայաստանում նոյնախիսի կառոյց հիմնելու առաջարկ արուեց⁴⁴: Արցախի ազգային Խորհուրդը փաստօրէն **կոմունիստ վարչախմբից անկախ առաջին խորհրդարանն ու կառավարութիւնն էր «Սոցիալիստական երկրների Վարչաւեան դաշնադրութիւն» կոչուած ամբողջ տարածքում** (Արցախից անմիջապէս յետոյ, 1989 թ. սեպտեմբերի 12-ին, երկրորդ ո՛չ կոմունիստական կառավարութիւնը կազմուեց Լեհաստանում): Համաժողովրդական ցոյցերի պահանջով Սովետական Հայաստանի Գերագոյն խորհրդի եւ Արցախի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի միացեալ նիստը միաձայն ընդունեց «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» որոշումը, որը արձանագրում էր. «Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ մարզային խորհրդի 1989 թ. փետրվարի 20-ի եւ հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպէս նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թ. օգոստոսի 16-ի նիստի որոշումներում... **Հայկական ԽՍՀ Գերագոյն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը:** Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիության իրավունքները... Հայկական ԽՍՀ Գերագոյն

խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչութեան ազգային շահերը... Գործադրել սույն որոշումից բխող բոլոր միջոցառումները՝... Հայկական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցումների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում»: Նիստը ընդունեց նաեւ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշման մասին» փաստաթուղթը, որտեղ նշում էր. «ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ նախատեսվում է Լեռնային Ղարաբաղը փաստորէն բռնությամբ Ադրբեջանական ԽՍՀ իշխանության տակ կրկին վերադարձնելը... ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի որոշմամբ նախատեսված՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության բացարձակ մեծամասնության կամքին հակառակ նրա բռնի վերադարձնելը Ադրբեջանական ԽՍՀ իշխանության տակ և մարզը բռնությամբ Ադրբեջանի կազմում պահելը, միջազգային ու սահմանադրական իրաւունքի նորմաներին համապատասխան, որակել որպէս բռնակցման նոր ակտ... ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի որոշումը... Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի համար հայտարարվում է անվավեր և ոչ մի իրաւական հետեւանքներ չստեղծող... Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի խախտման դեմ բողոքով դիմել ԽՍՀՄ Գերագոյն խորհրդին, բոլոր միութենական հանրապետությունների Գերագոյն խորհուրդներին, ՄԱԿ-ի անդամ-պետությունների պառլամենտներին, ներառյալ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության մասնակից-պետություններին և

Եվրոպական պառլամենտին... Հայկական ԽՍՀ-ը և ԼՂՀ-ը ներկայացնող ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների՝ նիստերի դահլիճից հեռանալու պահից ընդունված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի բոլոր որոշումները, հայ ժողովրդի իրավունքներին և շահերին դրանց չհամապատասխանելու դեպքում, համարել չգործող: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. Ոսկանյան, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ՝ Վ. Գրիգորյան»⁴⁴:

Միմիայն անկախ երկրի խորհրդարանը կարող էր ընդունել այսպիսի փաստաթուղթ, որը Խորհրդային Միության Գերագույն խորհուրդը մեկ ամիս անց յայտարարեց ապօրինի: Ի դեպ՝ դեկտեմբերի 1-ի որոշումից դեռևս երկու շաբաթ առաջ, 1989 թ. նոյեմբերի 17-ին, ԱՄՆ Սենատի «Արտաքին գործերի կոմիտեն» Արցախի խնդիրը քննարկելուց յետոյ ներկայացրեց հետևեալ բանաձևը. «Նկատի ունենալով հակամարտությունը խաղաղությամբ կարգաւորելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ձգտումը, որ ԼՂ բնակչության 80 տոկոսը կազմող բնակչությունը մշտապես ինքնորոշման եւ ազատության ձգտում է արտայայտում, որ 1988 թ. փետրուարի 28-29-ը Մումգայիթում հայերի սպանությունը խորհրդային կառավարությունը որակել է «ջարդեր», ԱՄՆ Սենատի Արտաքին գործերի կոմիտեն զօրակցություն է յայտնում ԼՂՀ մարզի ժողովրդի ձգտումներին, Խորհրդային Միութեանը կոչ է անում ԼՂ բնակչության նկատմամբ կատարուած բռնությունները քննել, ի յայտ բերել եւ դատական պատասխանատվության ենթարկել սպանությունների եւ արհեստագործությունների մեղաւորներին»: Բանաձևը մտայնութիւն յայտնելով, որ Արցախում ուղեւորութեան եւ մեծամասնութիւն կազմող հայ բնակչութեան ինքնորոշման իրաւունքը եւ ազատութիւնները, ըստ էութեան արձանագ-

րեց, որ հայ բնակչութեանը կոտորում եւ հէնց ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու համար: ԱՄՆ Սենատի հաւանութեանն արժանացած այդ փաստաթուղթը Մոսկուան անմիջապէս դատապարտեց, որի դէմ 1989 թ. դեկտեմբերի 1-ի յայտնի նիստը հրապարակեց հետեւեալ բողոքը. «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը... իրենց վճռական բողոքն են հայտնում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԱՄՆ սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձևի առթիվ ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության 1989 թ. նոյեմբերի 19-ի հայտարարության դէմ: ԱՄՆ սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձևը Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ընդունում է իբրև ռեգիոնի ձգձգվող քաղաքական ճգնաժամի առթիվ ամերիկյան ժողովրդի մտահոգության արտահայտություն, ինքնորոշման մասին Լեռնային Ղարաբաղի բնակչության արդարացի պահանջի պաշտպանություն և ըմբռնում»⁴⁵:

Արցախի բնակչութեան կոտորածների մասին 1990 թ. օգոստոսի սկզբին նախ Նիւ Եօրք Թայմսը, այնուհետեւ այլ թերթեր, տպագրեցին աշխարհի բազմաթիւ երկրների աւելի քան 150 յայտնի անձանց ստորագրութեամբ «Բաց նամակ համաշխարհային հասարակական կարծիքին՝ Խորհրդային Միութիւնում հայերի ջարդերի մասին ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻՆ» վերնագրով ուղերձը⁴⁶:

Այս եզակի փաստաթուղթը նոյնպէս օգնեց, որպէսզի սովետների կազմակերպած հայերի ջարդը աւելի մեծ շառաւիղներ չընդգրկէր: Այսպիսով՝ Արցախը Հայաստանին միաւորելու շարժում սկսած համայն հայութիւնը Արցախականի սկզբից մեկ տարի տասը ամիս անց հրապարա-

կաժ 1989 թ. դեկտեմբերի 1-ի պատմական որոշումով Արցախը վերամիավորեց Հայաստանին՝ բարոյահոգեբանական ջախջախիչ պարտութեան մատնելով Արցախը ամեն գնով Ադրբեջանի կազմում պահող կայսրութեանը՝:

Ռուսաստանից առաջնորդող Ղարաբաղ կոմիտե-ՀՀԸԽՄԻ-ի ղեկավարները, որոնք մի քանի ամիս առաջ մերժում էին Արցախը անկախ խորհրդարանով հայրենիքին միավորելու ճանապարհը, Խորհրդային Հայաստանի Գերագույն սովետի 1990 թ. մայիսի ընտրություններում ազատամարտի ելած հանրութեան քուէներով Հայաստանի խորհրդարանը գրաւեցին հէնց այդ ճանապարհով: Հանրահաւաքների պահանջով Խորհրդային Հայաստանի Գերագույն Խորհրդի այդ ընտրութեանը մասնակցելու իրաւունք էին ստացել նաեւ Արցախի բնակիչները, որոնցից 10-ը ընտրուեցին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամաւոր: 1990 թ. օգոստոսի 4-ին Հայաստանի խորհրդարանի նախագահ դարձաւ ՀՀԸ կոչւող խմբի դիւապաշտ ղեկավարը: 1990 թ. օգոստոսի 17-ին, հակառակ Խորհրդարանի նորանշանակ նախագահի թափած բոլոր ջանքերի, պատգա-

* Տես այդ օրերին հրապարակուած յօդուածների հետեւեալ մտքերը. «Ամենայն հայոց խորհրդարան կազմելը օրուայ հրամայականն է», «Լ. Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը Հայ դատը արդար լուծելու ճանապարհին մեր ազգի ազատագրական պայքարի առաջին յաղթանակն է», «Արցախն իր կազմում հոչակած Հայաստանի տէրն ու տնօրէնը ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆՆ է», «Հայ ժողովուրդը Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի պատմական որոշումներով վճռել է Արցախի հարցը», «ԽԱՀՄ Գերագույն խորհուրդն ու կառավարութիւնը ամեն կերպ ձգտում են Արցախը բոնութեամբ վերանախարկել Ադրբեջանին», «Արցախի համար պայքարը դարձել է մահու եւ կեանքի խնդիր», «Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանը պարտաւոր է բովանդակ ուժերը հունաւորելով՝ մղել դէպի ԱՐՑԱՅԻՆ ՎԵՐԱՄԻՄԻՈՐՄԱՆ 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշման ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ»⁴⁷:

մաւորների մեծ մասի պահանջով թոյլտուութիւն ստացա Խորհրդարանում ելոյթ ունենալու: Ելոյթում նշեցի, որ դրսից ղեկավարող Խորհրդարանի նախագահը փոխանակ մեր երկրի նուաճած համաշխարհային հեղինակութիւնը մղելու Արցախը հայրենիքին վերամիավորելու համահայկական ջանքերին, այդ ջանքերն ուղղում է երկրում բռնատիրութիւն հաստատելու վրայ: «Մենք այստեղ պետք է ստեղծենք այնպիսի մթնոլորտ, որպէսզի նոր խորհրդարանը կարողանա վերահսկել կառավարող վարչախմբին: Եթէ դա չկարողացանք անել, մեր հայրենիքին սպառնում է նոր մենիշխանութիւն... **Պարոնայք, մենք այնպէս չանենք, որ վաղը մեր ժողովուրդը երանի տա կոմունիստական ռեժիմին...** ՀՀԸ-ն ջանում է Հայաստանը վերադարձնել միակուսակցական բռնատիրութեան: Կոմկուսի 70-ամեայ մենիշխանութիւնը թոթափած հայ ազգը չի կարող թոյլ տալ մի նոր մենիշխանութիւն»⁴⁸:

ՀՀԸ վարչախմբի հանդէպ քաղաքական ընդդիմութիւն սկզբնաւորած այս ելոյթից յետոյ նոր իշխանութիւնները ինձ վրայ արձակեցին մոլեռանդ ամբոխին, որոնց մէջ նաեւ իրենց հաւաքագրած մօտ 50 հոգանոց կանանց խմբին, որին ժողովուրդը «ՀՀԸ բետէկներ» էր անուանում: Մի քանի երիտասարդների օժանդակութեան շնորհիւ ողջ մնացի: **Դա նոր իշխանութիւնների առաջին անաբեկչութիւնն էր**, որը խստօրէն դատապարտող Յայտարարութեամբ 1990 թ. օգոստոսի 20-ին հանդէս եկան այդ օրերի հանրային նշանաւոր գործիչներ Ի. Մուրադեանը, Ս. Զօլեանը, Հր. Խաչատուրեանը, Ալ. Մանուչարեանը եւ մի քանի ուրիշներ⁴⁹: Յետագայ իրադարձութիւնները ցոյց տուեցին, թէ որքան ճիշտ էին ելոյթի մէջ նշածս մտահոգութիւնները: Հայաստանում մենիշխանութիւնը կոմունիստներից անցաւ ՀՀԸ վարչախմ-

բին, որը 1991թ. Կոմկուսի հետ զուգիշխանություն կազմած՝ վերացրեց մեր ժողովրդի բազմաթիւ զոհերի գնով 1988 թ. փետրուարի 20-ից նուաճուած անկախութիւնը, բնակչութեան բացարձակ մեծամասնութեանը զրկեց ձայնի իրաւունքից, միակողմանի քարոզով շրջանցում կամ մերժում էր համազգային բոլոր հիմնահարցերի արծարծումը: ՀՀ վարչախումբը հայ իրականութեան մէջ գործող միակ կառոյցն էր, որը հրաժարում էր հայ դատից, չեղեալ յայտարարելու փոխարէն նորոգում էր Հայաստանի Հանրապետութեան տարածքների մեծ մասը կողոպտած 1921 թ. մարտի 16-ի ռուս եւ թուրք դաշինքը, պառակտում հայութեան անբաղդատելի միասնութիւնը, ջուրը լցնում Արցախի վերամիաւորման մեր համազգային պայքարի արցախեան համազգային շարժումը, մէջտեղից վերացրեց հայոց բնակի ազգասէր ու հայրենասուէր հրամանատարներից շատերին ու ազատամարտի այլ հերոսներին՝ խափանելով հայոց բռնազաւթուած միւս տարածքները եւս (Նախիջեւան, Գանձակ, Շահումեանի եւ Մարտակերտի տարածքները եւ այլն) ազատագրելու նրանց սեւեռուն ջանքերը:

Աւելին՝ ՀՀ կոչուած խմբի պետերը ՀՀ խորհրդարանի նախագահի գլխաւորութեամբ առանցքային պաշտօնները յանձնելով քաղաքական հասունութիւն եւ անցեալ չունեցող, պատերազմում չը կոուած, բայց ազատամարտիկ յորջորջող բազմաթիւ արկածախնդիրների, սրանց ձեռքով խարխուլեցին մեր անկախ պետականութեան հիմքերը, ուժաթափեցին հայոց բանակը: Սրանք պատերազմից յետոյ պետական կառոյցներում ստեղծեցին իրենց ենթակայութեան տակ գործող ռազմախմբեր, որոնք թշնամու դէմ կռուելու փոխարէն, սկսեցին վարկաբեկել ու հեղինակագրկել, երբեմն նաեւ գնդակահարել հայոց պետութեան եւ բանակի հայրենահոգ նուիրեալներին: Այդ ամէնի դիմաց սրանք ՀՀ

թիւ մէկ ղեկավարից ստացան կեղծ հեղինակութիւն, կոչումներ, պաշտոններ, գործարաններ, ձեռնարկություններ եւ այլ ունեցուածք: Այդ պատեհապաշտները անընդհատ վանկարկում էին «ով մեզ հետ չէ, մեր դէմ է», «մեր դէմ խաղ չը կայ» եւ նման մտքեր: Ովքեր իրենց հետ չէին եւ այսպանում էին դրանց պետականամերժ քայլերն ու մտքերը, ՀՀ բարձրագոյն ղեկավարութեան ձեռքով զրկում էին համարումից, հեղինակութիւնից, նոյնիսկ մարտական կենսագրութիւնից: ՀՀ անկախ Հանրապետութեան նախագահն իր տէրերին տուած երդումին հլու՝ ՀՀ խորհրդարանի հաստատմանը չը ներկայացրեց նաեւ Արցախը Հայաստանին վերամիաւորելու 1989 թ. դեկտեմբերի 1-ի պատմական որոշումը՝ ի չիք դարձնելով կոմունիստ վարչախմբի օրօք 1988 թ. փետրուարի 20-ից մինչեւ 1989 թ. վերջը ազատամարտ տուող համայն հայութեան այդ բացառիկ քաղաքական յաղթանակը⁵⁰:

Իսկ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան ընտրովի մարմինը, փոխանակ վերահաստատելու Արցախը հայրենիքին միաւորելու այդ որոշումը, ՀՀ թիւ մէկ ղեկավարի ջանքերով ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը Ղարաբաղի Հանրապետութիւն հռչակելու որոշում: Փաստօրէն, իւրային կոչուածների ծաւալուն ապաքարոզչութեան թակարդն ընկած Արցախի ընտրեալ մարմինը ՀՀ խորհրդարանի ՀՀ-ական նախագահի ձեռնարկած ծաւալուն գործողութիւններով 1991 թ. սեպտեմբերի 2-ին Արցախը անջատեց ոչ թէ Ադրբեջանից, այլ՝ Հայաստանից... Արցախը Հայաստանին վերամիաւորելու փոխարէն, որի համար հանուր հայութիւնը ոտքի էր ելել եւ մեծ յաջողութիւններ արձանագրել (քանի որ համաշխարհային հասարակական

կարծիքն այդ օրերին մերանպաստ էր), իր տերերի պահանջով հայութեանը 1991 թ. պարտադրեց Արցախի Հանրապետությունն պիտակը՝ դրանով իսկ ի չիք դարձնելով մեր ռազմական ու քաղաքական աննախադեպ յաջողությունները, սկզբնաւորելով մեր ժողովրդի դիւանագիտական պարտութիւնը: Մինչդեռ արիւնայեղ պատերազմից անմիջապէս յետոյ Արցախի վերամիաւորումը մայր հայրենիքին միջազգային հանրութիւնը շատ աւելի լաւ պիտի ընկալէր, քան տարածքը առանձին հանրապետութիւն հռչակելը, որը համարում էր անջատականութիւն...

Յայտնի ուժերը, ինչպէս եւ խոստացել էին իրենց կամակատարին, նշուած դաւադրութիւնների համար նրան 1991 թ. հոկտեմբերի 16-ին դարձրին ՀՀ նախագահ եւ արցախեան ազատամարտի արդիւնքների հիմնական փոշիացումը շարունակեցին նաեւ Ղարաբաղի Հանրապետութեան հռչակումով: Մակայն նշուած ուժերը Հայաստանի բարձրագոյն պաշտօնեայի անունից Հայաստանը ղեկավարում էին նրա սիոնական կնոջ ձեռքով: Այսպիսով՝ **անկախ Հայաստանի բարձրագոյն** ղեկավարը պետականօրէն փոշիացրեց հայոց համայնամարտի շնորհիւ Արցախը Մոսկուայից ու Ադրբեյջանից անջատելու, Հայաստանին վերամիաւորելու՝ Խորհրդային Հայաստանի Գերագոյն խորհրդի 1988-89 թթ. որոշումները: Աւելին՝ իշխանութիւնը գրաւելու ռուսական ներքուշէնիկներից ստացած օժանդակութեան դիմաց նա իր պաշտօնավարման ամբողջ ընթացքում մարտնչում էր Արցախի միացման դէմ՝ քողարկուելով հայութեանը մոլորեցնող, հայ պայքարունակ ոգին բթացնող թշնամական քարոզանու հետեւեալ կարգախօսի տակ. «Ադրբեյջանի հետ ոչ թէ առճակատում, այլ բանակցութիւններ», «առճակատման փոխարէն երկխօսութիւն»: Դրանով ՀՀ նախագահը հայութեան ինքնորոշման պայքարը, որը 1988-1989 թթ. ընդունում

էր աշխարհի երկրների գրեթէ 90 տոկոսը, նենգափոխելով առճակատումի, վերածեց **անջատականութեան**: Սկսուեց համաշխարհային հասարակական հայանպաստ կարծիքը զրոյացնելու եւ մօտ վեց հազար զոհերի գնով մեր ժողովրդի ձեռք բերած ռազմական ու դիւանագիտական աննախադեպ նուաճումները փոշիացնելու **յետընթացը**: Ինչպէս նշեցի, 1988 թ. փետրուարի 20-ին Արցախում բռնկուած ազատագրական պայքարը եւ 1990 թ. մայիս-օգոստոսին ժողովրդական ճնշումներով Մոսկուայից Հայաստանի խորհրդարանի յետզետե անկախանալը նոյնական շարժումներ բոցավառեց ամբողջ կայսրութիւնով մէկ, նաեւ Ռուսաստանում: ՀՀ կազմակերպութիւնը տրոհուելով Ռուսաստանում 1990 թ. գարնանից իշխանութեան համար իրար դէմ պայքարող կոմունիստների եւ ներքուշէնիկների կողմնակիցների, բոլոր միջոցներով ջանաց հայութեանը ներքաշել Կրեմլի եւ «դէմոկրատական Ռուսաստան» յորջորջեալ խմբերի միջեւ ծագած քաղաքացիական պատերազմի մէջ: Ներքուշէնիկները կոմունիստներից իշխանութիւնը խլելու համար Ռուսաստանում քաղաքացիական կոիւներ սանձազերծել չաջողելով՝ ամէն կերպ ձգտում էին դա իրենց դրածոյի միջոցով իրագործել այդ օրերին համաշխարհային հասարակական կարծիքի կենտրոն դարձած Հայաստանում: Բազմապիսի սադրանքներով ամէն կերպ ձգտում էին Կրեմլին մղել Հայաստանի դէմ պատժիչ գործողութիւնների, որպէսզի հայութեան վիթխարի ընդլուծումը եւ Հայաստանի բնակչութեան թափած արիւնը վերածելով միջազգային սկանդալի, կարողանային համաշխարհային վարկ եւ ազդեցութիւն ունեցող հայութեանը ՀՀ նախագահի ձեռամբ լծել Կրեմլից իշխանութիւնը զաւթելու իրենց նկրտումներին, մեր ժողովրդի միամիտ հատուածի առաջ հանդէս գալ հայութեանը Կրեմլի արիւնայեղութիւնից պաշտպանողի դիմակով:

1992 թ. մայիսի 8-ին Շուշիի ազատագրումից յետոյ (հրամա-
նատարութիւնը մեր ռազմարուեստի եզակի գործողութիւն-
ներից մէկը հանդիսացող Շուշիի ազատագրումը սկսել էր
ՀՀ այն ժամանակուայ նախահագի կամքին հակառակ...),
1992-1993 թթ. Մոսկուան իր ռազմական ուժով, հրասայլե-
րով, զրահամեքենաներով ու զինանոցով Հայաստանի ձեռ-
նասուն ղեկավարի վճռական օժանդակութեամբ հասաւ
այն բանին, որ հայոց բանակը ոչ միայն չկարողացաւ ազա-
տագրել նորանոր տարածքներ, այլեւ կորցրեց դաշտային
Արցախը եւս՝ իրենց բնօրրաններից տեղահանելով անելի
քան յիսուն հազար արցախցի՝ նրանց մեծ մասին գաղթեց-
նելով Ռուսաստան եւ այլ երկրներ։ Հայութեան ազատա-
մարտի արդիւնքները փոշիացնելուն ի խնդիր, Ռուսաստա-
նը 1994 թ. մայիսի 5-ին Բիշքէկում Հայաստանին պարտադ-
րեց դադարեցնել առաջխաղացումը, մեր երկրին ստիպեց
մայիսի 12-ին ստորագրել յաղթարշաւը կասեցնելու համա-
ձայնագիր։ Ժողովրդի ազատագրական ոգին ընկնելու եւ
նման այլ նպատակներով ՀՀ առաջին նախագահը սադրեց
բազմաթիւ արիւնյաեղութիւններ, մի քանի անձանց հարս-
տացնելու համար ամբողջ երկիրը հոսանքազրկեց-տաս-
նեակ հազարաւոր անձանց հոգեկանը խաթարեց-գամեց
անկողնուն։ Երկրում արմատաւորեց գողութիւնն ու կոռուպ-
ցիան, վարկաբեկեց ազգային բոլոր կարեւորագոյն գաղա-
փարներն ու սրբութիւնները (օրինակ՝ Հայրենիք, ազատու-
թիւն եւ այլ սրբազան հասկացութիւնների արժեզրկումը,
արցախցի-հայաստանցի երկպառակութիւն սկզբնաւորելը,
ցեղասպանութեան մասին խօսել-գրել թոյլ չտալը, հայոց
ազգային գաղափարախօսութիւնը «կեղծ կատեգորիա»
յայտարարելը, սատանայապաշտ աղանդների ներմուծու-
մով՝ մեր հայրենիքում դիւապաշտութիւն արմատաւորելու
նկրտումները եւ այլն)։ Վարկաբեկեց ազգի մտաւորակա-

նութեանն ու յատկապէս նրա հայրենապաշտ ընտրանուն, հովանաւորեց Հայաստանի նորագոյն պատմութեան խեղաթիւրումը, սարքովի կեղծ հեղինակութիւններին «հերոս»-ի կոչում տալով՝ սրբապղծեց ազգային հերոս երեւոյթը, բազմաթիւ նուիրեալ հայրենասէր գործիչներին հասարակական կեանքից հեռու պահելով ու մեջտեղից վերացնելով՝ նրանց փոխարէն իշխանութեան բերեց հանրութեան տականքին։

Հայաստանում պետականօրէն խափանելուց յետոյ արգելեց երկրի յառաջադիմութեան պատուար արդար մրցակցութիւնը, իր վարչախմբի համար վիթխարի գումարներ կորզելու դիմաց հանրային հարստութիւնը մի քանի ընտանիքների մենաշնորհելուց յետոյ Հայաստանը դարձրեց Ռուսաստանի գաղութը, որը Մոսկուայից շատ ատելի կախում ունի, քան Ռուսաստանի Դաշնութեան որեւէ մարզ։ ՀՀ առաջին նախագահն իր սարքած աւազակախմբով կողոպտեց, օտարներին ծախեց հանրային ունեցուածքն ու եկամտի պետական աղբիւրները (ջուրը, վառելիքը, էլեկտրատէրգիան, կարենորագոյն հանքավայրերը եւ այլն)։ Արցախականը ուժազրկելը, մարելը, պառակտելը եւ **երկիրը հանրութեան տականքի տիրապետութեանը յանձնելով աղէտելը դարձնելով պետական քաղաքականութիւն, նա սկզբնաւորեց իրեն** պաշտօնի մղած ուժերի գերագոյն խնդիրը՝ Հայաստանի հայաթափումը։ Սրա պաշտօնավարման տարիներին (1991-1998 թթ.) ատելի քան կէս միլիոն հայլքեց Հայաստանը, որը շարունակուելով, 2013 թ. հասել է ատելի քան մէկ միլիոնի։ Այս եւ բազում այլ ոճիրների համար նա անպայման պէտք է պատասխան տա եւ պատժուի։ Ժողովուրդն արդէն մօտ 15 տարի առաջ է դա արել։ Նրա պաշտօնանկութիւնից երեք օր յետոյ հրաւիրուած 1998 թ. փետրուարի 6-ի հանրահաւաքում հանրութիւնը նրա անու-

նը կնքեց **Լեւոն Չարագործ**⁵¹, իսկ 2007-2008 թուականից մտատրականությունը նրան կոչում է **ԼՏՊ՝ անարժան համարելով անուանել հայերիս մեջ տարածուած անուն-ազգանունով**: Հերթը իշխանություններին է, որոնք այս հարցում պետք է մեկ քայլ առաջ գնան՝ պատասխանատվության կանչելով նաեւ նրան յաջորդածներին: ՀՀ կուտակած չորս միլիարդ դոլար պարտքի, երկրի ռազմավարական ունեցուածքի, արդիւնաբերութեան եւ հանքավայրերի անվերահսկելի վաճառքի, բնակչութեան անասելի ջրատրութեան ու հաւատալօշոտեան, երիտասարդութեան ծրագրուած բարոյագրկման, ժողովրդի դաւանական եւ գիտակրթամշակութային այլասերման, երկրի կրթական համակարգը կազմալուծելու եւ, վերջապէս, 20 տարում Հայաստանի Հանրապետութիւնից աւելի քան մեկ միլիոն բնակչութեան արտագաղթի, այն է՝ մեր երկիրը հայազրկելու-հայոց ցեղասպանութիւնը շարունակելու պատասխանատուն անվերապահօրէն ՀՀ 1991-2013 թթ. Բարձրագոյն ղեկավարութիւնն է, որոնցից ամէն մէկի մեղաւորութեան չափը պետք է որոշի անկախ դատարանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Յայտնի է, որ պատմագիտությունը Հայոց մեծ եղեռնի սկիզբը նշում է 1915 թ. ապրիլի 24-ը, երբ մեկ գիշերուայ մեջ թուրք պետությունը ձերբակալեց 235 անուանի հայ մտատրականի, գրողի ու արուեստագետի, որոնց թիւը կարճ ժամանակ անց հասաւ աւելի քան 500-ի: **Բայց, ինչպէս վերը նշեցի, սովետները բազմապատիկ աւելի ահարկու խոշտանգումներով եւ մեծ քանակով «ազգայնական, դաշնակցական»** լինելու, այսինքն՝ հայ լինելու, այն է՝ որոշակի ազգին պատկանելու համար 1915 թ. ապրիլի 24-ը կրկնեցին 1949 թ. յունիսի 13-ի գիշերը... Մոսկուայի իրագործած 1921-1945 թթ. կոտորածներն ու պատիժները՝ Հայաստանը առանց հայերի ծրագրով 1949 թ. զանգուածային աքսորը Ալթայ, մասամբ նաեւ դրանից յետոյ շարունակուող բռնություններին առաջին հերթին զոհ գնաց Հայաստանի եւ կովկասեան սփիւռքի ամբողջ հայ ընտրանին՝ **Վահան Տէրեանից, Եղիշէ Չարենցից ու Ակսել Բակունցից սկսած՝ Ամենայն հայոց Խորէն Մուրադբէկեան կաթողիկոսով, Գարեգին Նժդեհով, յետագայում՝ Պարոյր Սեակով, Մինաս Աւետիսեանով եւ խոշոր քանդակագործ Արա Մարգսեանով վերջացրած**: Ըստ իս, 1895-1949 թթ. ընթացքում Ռուսաստանը եւ Թուրքիան բնաջնջել են աւելի քան երեք միլիոն հայի: Այդ երեք միլիոնից մօտ մեկուկէս միլիոնին, ներառեալ արեւելահայութեան ընտրանին եւ բիւրաւոր ուրիշներ, կոտորել են ցարական եւ բօլշեւիկեան Ռուսաստանները...

Դարձեալ՝ նշեմ, որ Հայաստանի Հանրապետութիւնում եւ Կովկասում բօլշեւիկների իրագործած հայերի 1921-1949 թթ. կոտորածները Ռուսաստանի ժողովուրդների հանդէպ 1918-1955 թթ. իրականացուած ցեղասպանութեան առանցքային իրողութիւններից են:

նը կնքեց Լեւոն Չարագործ⁵¹, իսկ 2007-2008 թուականից մտաւորականութիւնը նրան կոչում է ԼՏՊ՝ անարժան համարելով անուանել հայերիս մէջ տարածուած անուն-ազգանունով: Հերթը իշխանութիւններինն է, որոնք այս հարցում պէտք է մէկ քայլ առաջ գնան՝ պատասխանատուութեան կանչելով նաեւ նրան յաջորդածներին: ՀՀ կուտակած չորս միլիարդ դոլար պարտքի, երկրի ռազմավարական ունեցուածքի, արդիւնաբերութեան եւ հանքավայրերի անվերահսկելի վաճառքի, բնակչութեան անասելի չքաւորութեան ու հաւատաշօշոթեան, երիտասարդութեան ծրագրուած բարոյագրկման, ժողովրդի դաւանական եւ գիտակրթամշակութային այլասերման, երկրի կրթական համակարգը կազմալուծելու եւ, վերջապէս, 20 տարում Հայաստանի Հանրապետութիւնից աւելի քան մէկ միլիոն բնակչութեան արտագաղթի, այն է՝ մեր երկիրը հայազրկելու-հայոց ցեղասպանութիւնը շարունակելու պատասխանատուն անվերապահօրէն ՀՀ 1991-2013 թթ. Բարձրագոյն դեկավարութիւնն է, որոնցից ամէն մէկի մեղաւորութեան չափը պէտք է որոշի անկախ դատարանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Յայտնի է, որ պատմագիտութիւնը Հայոց մեծ եղեռնի սկիզբը նշում է 1915 թ. ապրիլի 24-ը, երբ մէկ գիշերուայ մէջ թուրք պետութիւնը ձերբակալեց 235 անուանի հայ մտաւորականի, գրողի ու արուեստագէտի, որոնց թիւը կարճ ժամանակ անց հասաւ աւելի քան 500-ի: **Բայց, ինչպէս վերը նշեցի, սովետները բազմապատիկ աւելի ահարկու խոշտանգումներով եւ մեծ քանակով «ազգայնական, դաշնակցական»** լինելու, այսինքն՝ հայ լինելու, այն է՝ որոշակի ազգին պատկանելու համար 1915 թ. ապրիլի 24-ը կրկնեցին 1949 թ. յունիսի 13-ի գիշերը... Մոսկուայի իրագործած 1921-1945 թթ. կոտորածներն ու պատիժները՝ Հայաստանը առանց հայերի ծրագրով 1949 թ. զանգուածային աքսորը Ալթայ, մասամբ՝ նաեւ դրանից յետոյ շարունակուող բռնութիւններին առաջին հերթին զոհ գնաց Հայաստանի եւ կովկասեան սփիւռքի ամբողջ հայ ընտրանին՝ Վահան Տէրեանից, Եղիշէ Չաբենցից ու Ակսել Բակունցից սկսած՝ Ամենայն հայոց Խորէն Մուրադբէկեան կաթողիկոսով, Գաբրէգին Նժդեհով, յետագայում՝ Պարոյր Մեակով, Մինաս Աւետիսեանով եւ խոշոր քանդակագործ Արա Մարգսեանով վերջացրած: Ըստ իս, 1895-1949 թթ. ընթացքում Ռուսաստանը եւ Թուրքիան բնաջնջել են աւելի քան երեք միլիոն հայի: Այդ երեք միլիոնից մօտ մէկուկէս միլիոնին, ներառեալ արեւելահայութեան ընտրանին եւ բիրատու ուրիշներ, կոտորել են ցարական եւ բօլշեւիկեան Ռուսաստանները...

Դարձեալ նշեմ, որ Հայաստանի Հանրապետութիւնում եւ կովկասում բօլշեւիկների իրագործած հայերի 1921-1949 թթ. կոտորածները Ռուսաստանի ժողովուրդների հանդէպ 1918-1955 թթ. իրականացուած ցեղասպանութեան առանցքային իրողութիւններից են:

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ

(հայերիս ազգային գաղափարաբանության հիմունքները)

Ա. ՀԱՅԸ ազգային ինքնատիպ նկարագիր, հոգեկան կերտումաժ ու անշփոթելի խառնուածք ունեցող, ընտանիքը սրբութիւն դաւանող, հայերէն մտածող, հայախօս, մարդաբանական արմէնիդ տեսակն ու արիւնը անխառն-անաղարտ պահող, բարին, յառաջադիմութիւնն ու նորարարութիւնը ի ծնէ բնագոյօրէն իր մէջ ագուցած անհատների ՄՇՏԱՐԴԻ հաւաքականութիւն է, որը Հայկական լեռնաշխարհում բնակուել կամ բնակուում է նախամարդ Ադամի եւ Նոյ Նահապետի շառաիդ, Թորգոմի որդի Հաբէթեան Հայկ Նահապետի ժամանակներից: Հայ են նաեւ ազգային լեզուից, դաւանանքից, մշակոյթից, իրենց հայրենիքից հեռացած բոլոր այն հայկազունները, ովքեր չեն ժխտում իրենց հայկական ծագումն ու հայկական քաղաքակրթութեան ժառանգորդ լինելը, Հայաստանը համարում են իրենց հայրենիքը, հայերէնը՝ մայրենի լեզուն, Հայադաւանութիւնը՝ ազգային կրօնը եւ բարենպաստ պայմանների առկայութեան դէպքում բնական են համարում հայութեան համախմբումը իր պատմական հայրենիքում՝ հայութեան կենսաբանական եւ բնախօսական բուն միջավայրում:

Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ (համայն հայութիւնը) մեր անցեալ, ներկայ ու ապագայ սերունդների միացեալ, համագոյ ու անզատելի ամբողջութիւնն է, որի յաւերժական առաջնորդը նրա չորսելկէսհազարամեայ սերուցք ընտրանին է:

Գ. ՀԱՅԵՐԻՍ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵԾ ՀԱՅՔՆ Է՝ իր տասնհինգ աշխարհներով (Բարձր Հայք, Ծովք, Աղձնիք, Տուրքերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Միւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Այրարատ, Գուգարք, Տայք)՝ ներառեալ Փոքր Հայքը, Միջագետք Հայոցը՝ Մծբին

կենտրոնով ու Կիլիկեան Հայաստանը՝ 1198-1219 թթ. տարածքներով:

Դ. ՀԱՅԵՐԻՍ խոսակցական լեզուն հայերէնի բարբառներն ու խօսուածքներն են, ՄԱՅՐԵՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ՝ լեզուների հիմք ԳՐԱԲԱՐԸ եւ արդի հայերէնի ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ու ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ տարբերակները, որոնք գրաբարի հետ միասին ՀԱՌԱՍԱՐԱԶՕՐ ԳՐԱԿԱՆ լեզուներ են:

Ե. Հայերիս ազգային կրօնը, որը մեր ժողովրդի համար Դ-Ե դարերից ի վեր եղել եւ մնում է ազգային գաղափարաբանութիւն, ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատած Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցու դաւանութիւնն է՝ Նոյ Նահապետից եկող քրիստոնէական ճշգրիտ ու անբիծ վարդապետութիւնը՝ ՀԱՅԱԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ: Հայադաւանութեանը ներհիւսումն է Հայկ Նահապետի հիմնած, Հայոց Ոսկեդարում Մբ. Թարգմանիչների, Մբ. Վարդանի եւ Մամիկոնեանների համակարգած-յետագայ դարերում լրացուած եւ Ի դարի առաջին կեսին Գարեգին Նժդէհի ու իր գաղափարակիցների վերականգնած, ամբողջացրած, զօրացրած ու նաեւ ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ անուանած հայոց ինքնապաշտպանական համակարգը՝ ՈՒՒՏ ՄԱՄԻԿՈՆԷԻՅԸ:

Զ. Հայադաւանութեան պատմահոգեբանական հիմքը Հայկ Նահապետի մեծագործութիւնն է, որով հայութիւնը մեզանից 4500 տարի առաջ սկզբնաւորեց կոապաշտութեան դէմ մարդկութեան հոգեմարտը: Ասել է թէ՛ հայերս ոչ միայն սկզբից ի վեր եղել ենք ՄԻԱՍՏՈՒԱԾ, այլեւ սկզբնաւորել ենք քաղաքակրթութեան պայքարը կոապաշտութեան ու բազմաստուածութեան դէմ, որը միաժամանակ նաեւ խղճի ազատութեան համար առաջին ազատամարտն էր մարդկութեան պատմութեան մէջ:

Ուստի այն իրողությունը, որ **ս. Գրիգորի ձեռքով 301 թուականին հարիւր հազարաւոր հայեր միասնաբար մկրտուեցին**, եւ որ քրիստոնէութիւնը առաջինը **ԱԶԳՈՎԻՆ** ու պետականօրէն հայերս ընդունեցինը, պատահական չէր, քանզի հայութեան համար քրիստոնէութիւնը ոչ թէ հազուստ էր, այլ մարմնի գոյն (**ս. Վարդան**): Եւ իբրեւ հայ ժողովրդի անշփոթելի իւրայատկութիւն, **մեր ազգային ինքնութիւնն ու դաւանութիւնը նոյնական են: Հետեւաբար՝ հայերս 301 թուականին, ազատագրուելով եկամուտ բազմաստուածութիւնից, ոչ թէ հեթանոսութիւնից հրաժարուեցինը, այլ վերականգնեցինը մեր ազգային ճշմարիտ դաւանանքը**, որի մշակն ու պահապանը 301 թ. ի վեր Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցին է:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ արեւմտեան եւ արեւելեան քաղաքակրթութիւնների խաչմերուկներում հազարամեակներ շարունակ մարտնչող **ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՈՒ ԱՆՇՓՈԹԵԼԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ** խտաբանն է, համայն հայութեան հոգեւոր միասնութեան վէմը, հայ ազգի **ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ**, որը հայոց պետականութեան հետ **ՄԷԿ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԿԱԶՄԻ**, ինչպէս հոգին ու մարմինը:

Հյաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցու դաւանութեան մէջ բաղադրուած են հայ ժողովրդի պատմութիւնը, խառնուածքը, լեզուամտածողութիւնը, աշխարհայեացքն ու բնաւորութիւնը, ծեսերը, ասանդութիւնները, բարոյական, իրաւագիտական, իմաստագիտական ու գեղագիտական ըմբռնումները, բանահիւսութիւնն ու երգահիւսութիւնը, գրականութիւնը, արուեստները, մշակոյթն ու **ՊԱՏՄԱԿԱՆ** հոգեբանութիւնը: Այն մշակել եւ բիւրեղացրել են մեր ազգային սրբերը, հայոց մշակոյթի, գիտութեան, արուեստի ու գրականութեան երեւելի դէմքերը, մեր պետական, քաղաքական, իրաւական ու ռազմական մտքի մեծերը՝ Հայկ Նահապետից մինչեւ **ս. Սահակ-ս. Մեսրոպ**, հայոց Ոսկեդարն ու

Արծաթադարը հրաշակերտած այրերից մինչեւ նոր ժամանակների հեղինակութիւնները:

Է. ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ երկրի բոլոր քաղաքացիների ազատախոհութեան, այսինքն՝ գաղափարախօսութեան, դաւանանքի եւ համոզմունքի **ընտրութեան ազատութիւնը** ապահովող սեփական արդար, **անխտիր** ու հաւասարազօր օրէնքներով գաղափարաքաղաքական, բարոյական ու տնտեսական շահագործում՝ ներից գերծ պետութեան մէջ իր ազգային դաւանանքի եւ մշակոյթի միջավայրում արժանապատիւ ու բարեկեցիկ կեանքով ազատօրէն բարգաւաճելն է՝ ի կատարումն եւ ի խնդիր հայ ժողովրդի գերագոյն բաղձանքի՝ **ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ**:

Ը. Հայութեան համազգային նպատակներին հասնելու ճանապարհը հայոց Սասնա Ծռեր դիւցազնապատումի ռազմահոգեբանութիւնն է եւ Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցւոյ նուիրագործած՝ **ս. Օգոստինոսի** հետեւեալ բանաձեւը. **ՄԻՈՒԹԻՒՆ՝ Ի ԿԱՐԵՒՈՐՍ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ՝ ՅԵՐԿԲԱՅԱԿԱՆՍ, ՄԷՐ՝ ՅԱՄԵՆԱՅՆԻ** (կարեւոր խնդիրներում՝ միութիւն, վիճելի-թեական հարցերում՝ ազատութիւն, ամեն ինչում՝ սէր):

Թ. Մամիկոնէից Տարօնականների ԱՂՕԹԸԸ

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ, ՓՐԿԵԱ՝ ԶԱԶԳՍ ՀԱՅՈՑ

ԵՒ ԺՈՂՈՎԵԱ Ի ՀԱՅՐԵՆԻՍ ՄԵՐ:

ԱՐԺԱՆԱՅՈ՝ ԶՄԵԶ ԼԻՆԵԼ ՏԷՐ

ԱՂՕԹԱՏԱՆՑ ՄԵՐՈՑ, ԳԵՐԵԶՄԱՆԱՑ ՍՐԲՈՑ

ՄԵՐՈՑ ԵՒ ՇԻՐՄԱՑ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ:

(ՏԷՐ Աստուած, փրկի՛ր հայ ազգը եւ հաւաքի՛ր մեր հայրենիքում, մեզ արժանի արա տէր կանգնելու մեր աղօթատներին, սրբերի գերեզմաններին ու նախնիների շիրիմներին):

CREED OF THE MAMIKONIAN-TARONAKANS

(CREED OF ARMENIAN NATIONAL IDENTITY)

This "Creed" is the most concise of the platforms of the organizations operating amongst us. It can certainly be considered the crystalization of Armenian national ideology. The creed's small number of items, its completeness and general acceptability give the individuals and collective units participating in this organization utmost ideological freedom. In its structure, the fraternal organization is decentralized and it is not a **POLITICAL PARTY**, since it does not aspire to achieve a position of power for any individual stratum or class of society; rather, it seeks to accomplish the mission of having a just homeland for all Armenian people or, as Garegin Nezhdeh put it, becoming masters of the homeland. In the words of Haik Asatrian, "it seeks to naturally put an end to the inter-party antagonism that is present among Armenians and constitutes a destructive force. It seeks to concentrate the efforts of the Armenian people as a whole on the essential questions pertaining to our national survival, by means of spiritual revival."

This Creed, based on the worldviews of the shapers of our national ideals was composed and revised from 1989 to 2007. It can be considered without doubt the national creed of the Armenian nation and its identity, a concise doctrinal statement in defense of Armenian Christianity.

A. ARMENIAN is the **HISTORICAL** collectivity of individuals characterized anthropologically as the Armenoid type, who have a distinct national character, spiritual makeup and unmistakable nature, who think in Armenian and speak Armenian, and who have lived in the Armenian highlands ever since the time of Haik Nahapet Habetian [Japheth], son of Torgom, or are living there. Also Armenian are all those descendants of Haik, or those of Armenian extraction, who have become removed from their national language,

religion, culture and homeland, who don't deny their Armenian origin and their being the heir to Armenian civilization, who consider Armenia the homeland of their ancestors, Armenian their mother tongue, the Armenian Apostolic faith the national religion, and who consider it natural, under favorable circumstances, the gathering together of the Armenians in their historic homeland, the true biological and physiological **ENVIRONMENT** of the Armenian people.

B. THE ARMENIAN PEOPLE (the entire Armenian population) is the united, co-existing and inseparable totality of our past, present and future generations. And our people's eternal leaders from Hayk Nahapet to the present, throughout its four and a half millennia, has been, in the words of Garegin Nzhdeh, the nation.

C. THE HOMELAND OF US ARMENIANS IS GREATER ARMENIA [ARMENIA MAJOR], with its fifteen provinces (Upper Armenia, Tsopk, Aghdznik, Turuberan, Mokk, Korchayk, Parskahayk, Vaspurakan, Siunik, Artsakh, Paytakaran, Utik, Ayrarat, Gugark, Tayk), including Lesser Armenia, Armenian Mesopotamia, with Nisibin as its center, and Cilician Armenia, with the territory it encompassed in the years between 1198 and 1219 A.D.

D. THE MOTHER TONGUE OF US ARMENIANS are the dialects and subdialects; **THE LANGUAGE OF OUR NATION AND STATE:** Its foundation is GRABAR [Classical Armenian]; modern Armenian consists of the **WESTERN ARMENIAN** and **EASTERN ARMENIAN** versions [branches], which are **EQUIVALENT LITERARY** languages for all Armenians.

E. The national religion of us Armenians, which has been and continues to shape our national consciousness since 301 AD, is the faith of the Armenian Holy Apostolic Church, established by St. Gregory the Illuminator, which has its roots in the true and sacred Christian doctrine from the time of Noah. That Armenian faith is grounded in the heroic deeds of Hayk Nahapet, by which the Armenian people initiated Armenia's struggle against idolatry 4500 years ago. That is to say, we Armenians not only have been

monotheistic from our very beginnings, but we also initiated the struggle of civilization against idolatry and polytheism, which at the same time was the first struggle for freedom of conscience in human history. Thus, the fact that in 301 hundreds of thousands of Armenians were baptized at one time by St. Gregory and that the Armenia was the first nation to adopt Christianity as its state religion is not a coincidence, because, for Armenians, Christianity was not clothing, but the body itself (St. Vardan). Moreover, our national identity and religious creed became fused. Thus, in 301 AD, it is more correct to say that rather than conversion from paganism, the Armenians reestablished their true national religious creed, whose shepherd and keeper is the Armenian Holy Apostolic Church. THE ARMENIAN CHURCH is the compressor of the UNIQUE AND UNMISTAKABLE ARMENIAN CIVILIZATION, which has waged a continual struggle for millennia at the crossroads of Western and Eastern civilizations. It is the cornerstone of the spiritual unity of all Armenians; the SPIRITUAL HOMELAND of the Armenian nation, which, together with Armenian statehood, SHALL FORM ONE INDIVISIBLE WHOLE, like body and soul.

The faith of the Armenian Holy Apostolic Church is a composite of the history, linguistic thought, character, world view and nature of the Armenian people, their rituals, traditions, moral, judicial, philosophical and esthetic concepts, folklore and song art, literature, arts and culture; our HISTORICAL psychology and the 4,500-year-old national IDEOLOGY of us Armenians. It [the faith] has been cultivated and crystallized by our national saints, prominent figures in the fields of culture, science, art and literature, the great cultivators of our governmental, political, legal and military thought, from Hayk Nahapet to St. Sahak and St. Mesrob, from those who created the Armenian Golden Age and Silver Age, down to the authorities of the modern age.

F. The Armenian Apostolic faith includes the self-defense system of the Armenians - THE NATIONAL IDEOLOGY OF US ARMENIANS - MAMIKONIAN OATH - founded by Hayk Nahapet,

systematized and strengthened during the Armenian Golden Age by the Holy Translators, St. Vartan and the Mamikonians, supplemented in later centuries, restored, completed and given the name TARONAKANUTIUN (TARONISM) by Garegin Nezhdeh and his ideologues in the first half of the 20th century.

G. THE GOAL OF THE ARMENIAN PEOPLE IS BECOMING MASTERS OF THEIR HOMELAND (hayrenatiroutiun): to prosper in the historical homeland of the Armenian people, in an environment defined by their national faith and culture, in a state with its own just laws that apply to all without discrimination and which is free from political, moral and economic exploitation.

H. For the Armenian people to attain these national goals, the path is the principles adopted by the Armenian Apostolic Church, as formulated by St. Augustine: In essentials, unity; in non-essentials, toleration; and in all things, love.

THE PRAYER Of the Mamikonians-Taronakans

**LORD GOD, SAVE THE ARMENIAN NATION AND GATHER
THE NATION IN OUR HOMELAND; MAKE US WORTHY
OF PROTECTING AND DEFENDING OUR HOUSES OF
WORSHIP, THE TOMBS OF OUR SAINTS, AND THE
GRAVES OF OUR FOREFATHERS.**

(Translated by Aris G. Sevag)

1. Փաստաթուղթը տե՛ս Ղազարեան Հ., Մեւրի պայմանագիրը եւ - Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերեալ, հտ. երկրորդ, 2012 թ., էջ 301: Տես նաեւ՝ Ղազարեան Հ., Մեւրի պայմանագիրը եւ Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռը - Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերեալ, հտ. երկրորդ 2012 թ., էջ 287-299, 301-309; Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia, Washington, November 22, 1920, (prepared by Ara Papian). Yerevan, 2011, pp. 98-112; Ռ. Համբարձումեան, Թուրքիայի հետ ՀՀ միջպետական յարաբերութիւնների հիմքը Մեւրի պայմանագիրն է, «Հայոց աշխարհ» թերթ, 2009 թ. յունուարի 29, էջ 7; Նոյն յօդուածը՝ «Նոր Հայաստան», Գլենդէլ, 2009 թ., փետրուարի 7, թիւ 22, էջ1, 3-5; Նոյնը՝ «Նոր կեանք» շաբաթաթերթ, ԱՄՆ, 2009 թ. հոկտեմբերի 29, էջ 12, 29; ՀՀ-ն պէտք է դիմի ՄԱԿ միջազգային դատարան, «Գրական թերթ», 2009 թ. ապրիլի 3; Նօրին ս. Օծուբիւնք ...կաթողիկոսաց, ՀՀ նախագահին, համայն հայութեանը, «Նոր կեանք», 2010 թ. փետրուարի 25, էջ 16: Յորդորակ Ազգին, Վիլսոնեան Իրաւարար վճռի մասին, «Նոր կեանք», 2010 թ. սեպտեմբերի 30: Մեւրի դաշնագիրը եւ Վ. Ուիլսոնի Իրաւարար վճիռը՝ Հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարութեան հիմք, «Նոր կեանք», ԱՄՆ, 2010 թ. դեկտեմբերի 30: Մեւրի դաշնագիրն ու Վ. Ուիլսոնի Իրաւարար վճիռը Հայկական հարցը հետապնդելու նոր ռազմավարութեան հիմք, Երեւանի պետհամալսարանի «Պատմութիւն եւ մշակոյթ» հայագիտական հանդէս, թիւ Ա, Երեւան, 2011 թ., էջ 117-143; Հանգանակ հայ ինքնութեան, գիրք, Բ հրատարակութիւն, Երեւան, 2012 թ., էջ 16-27, 102: Հարութ Սասունեան, The California Courier, Hounis 7, 2012; Նոյնի Երեք մարմինները ճանչել են Հայոց ցեղասպանութիւնը, Հայոց աշխարհ, 2012 թ. յունիսի 13, էջ 6: Նոյնի Միացեալ Նահանգներու կառավարութեան երեք մարմիններն ալ կը ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը, Ramgavar Mamoul July 23, 2012; «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, 2011 թ. հոկտեմբերի 8, էջ 5; Նոյն օրաթերթի՝ 2011 թ. դեկտեմբերի 23-ի թիւը, էջ 1: Նոյն օրաթերթի՝ 2012 թ. փետրուարի 29-ի թիւը:

2. Մայիսի 28, ժողովածոյ, Փարիզ, 1926 Հրատարակութիւն ՀՅԴ Փարիզի շրջկոմիտէի էջ 5:

3. Մայիսի 28, Փարիզ, 1926, էջ 6-24:

4. ԼԱՋԵԱՆ. Գ., Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնագրերի, Գահիրէ, 1942, էջ 95-96: Ա. Գիւլիսանդանեան, Բազուի հերոսամարտը, «Հայրեն-

նիք» ամսագիր, 1941 թ. Յուլիս, թիւ 9, էջ էջ 98:

5. Լազեան. Գ., Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնագրերի, Գահիրե, 1942, էջ 95-96:

6. Ռ. Համբարձումեան, Ղարաքիլիսայի համատարած խումբալը յաղթանակի վերածող ոգին, Երեւան, 2005 թ., էջ 22:

7. Գ. Նժդեհի խօսքը Հայաստանի անկախության 25-ամեակի առթիւ, «Ռազմիկ» թերթ, Սօֆիա, 1943 թ. յունիսի 17, արտատպւած է Գ. Նժդեհ, երկեր հտ. 1, Երեւան, 2002 թ., էջ 480-481: Աւօ, Նժդեհ, Պէյրութ, 1968 թ., էջ 67, 468, 743: Վահէ Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002 թ., էջ 362-364:

8. Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէրոսթ, 1956 թ., էջ 31-32:

9. Ռ. Համբարձումեան, Ղարաքիլիսայի համատարած խումապը յաղթանակի վերածող ոգին, Երեւան, 2005 թ., 68 էջ:

10. Ա. Գիլյանսկայան, Բագրի հերոսամարտը, ՀԱՅԲԵՆԻՔ ամսագիր, 1941 թ. Յուլիս, թիւ 9, էջ 92-93

11. Իշխանեան Բ., Բագրուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920 թ. էջ 5-6, 22, 187:

12. Գ. Ստեփանեան, Բաբու քաղաքի հայութեան պատմութիւնը, Երեւան, 2011թ. ,էջ 371-374:

13. Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանց, տաճիկները Կովկասում եւ Բազումի անկումը, պրակ ԵՐԿՐՈՐԴ, Բազու, 1919 էջ 73-75, 86-87:

14. M. J. Somakian, *Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920*, London, 1995, p. 229; www.turkey.mid.ru;

15. Փափազեան Ա., Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտօրրքերի դատավարութեան փաստաթղթերի, Լոս Անջելէս, 2005 թ., էջ 175 , 45-256; Documents on British Foreign Policy, 1919—1939. First series. Vol II. 1919. P. 914—925; Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III. P. 775-776. Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948/Burdett A.I.P 9 (ed) Archive editions.. 1998. P. 548-552, 559; Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference, Vol. VII. p. 858; Documents on British Foreign Policy. 1919—1939. First Series. Vol. III. 1919 (London, 1949); Doc. № 613. Note 1. P. 700-702. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, Vol. XII. P 811-914:

16. Գ. Լազեան, Հայաստան եւ Հայ դատը, Երեւան, 1991 թ., էջ 210-224:

17. Տե՛ս իմ հետևեալ յօդուածները. Վոդորո Վիլսոնի 1920 թ. տղամարդի 22-ի իրաւարար վճիռը իրականացնելու հիմքերը եւ ճանապարհները,

«Նոր կեանք» շաբաթաթերթ, ԱՄՆ, 2009թ. հոկտեմբերի 29, էջ 12, 29; Թուրքիայի հետ ՀՀ միջպետական յարաբերությունների հիմքը Սերի դաշնագիրն է, «Նոր կեանք» շաբաթաթերթ, ԱՄՆ, 2009 թ. նոյեմբերի 5: Նամակ ՀՀ նախագահին եւ այլ կառույցներին, «Նոր Հայաստան» օրաթերթ, ԱՄՆ, 2009 թ., նոյեմբերի 6: ՀՀ միջազգային յարաբերությունների հիմքը, «Երկիր» օրաթերթ, Երեւան, 2009 թ., նոյեմբերի 25:

18. Հայոց պատմություն, հատոր 4, գիրք առաջին, Երեւան, 2010 թ., էջ 514-520;

19. Հայոց պատմություն, հատոր 4, գիրք առաջին, Երեւան, 2010 թ., էջ 518;

20. Հայոց պատմություն, հատոր 4, գիրք առաջին, Երեւան, 2010 թ., էջ 519-520, 522-523:

21. Генри Киссинджер, Дипломатия, Москва, 1997 г., ст. 301; Оглашению подлежит, СССР-Германия, 1939-1941, составитель-переводчик Юрий Фельштинский, Москва, 1991, с.4-11, տե՛ս գրքի Договор о ненападении между Германией и Советским Союзом, եւ Секретный дополнительный протокол к нему, с. 69-71, 73-90, 138, 229-235, 240-278, նաեւ՝ Das nationalsozialistische Deutschland und die Sowjetunion, 1939-1941. Akten aus dem Archiv des Deutschen Auswärtigen Amtes, Department of State, 1948; Nazi-Soviet Relations, 1939-1941, Documents from the Archives of The German Foreign Office, Departments of State, 1948; Уистон Черчилль, Вторая мировая война, Книга первая, том 1-2, М. 1991, ст. 163-166, 179-180, 204; Арутюнян К., Участия армянского народа в великой отечественной войне Советского Союза.

22. Платонов Олег, Русский труд, Москва, 1991, стр.282-283; Суворов В., Последняя Республика, Москва, 2005 г., ц. 103-105:

23. Snyder, Bloodlands. Europe between Hitler and Stalin, 2010; 71; Иванов С. П. Армейский Штаб фронтовой, Москва, 1990 г., стр. 14, 20, 26-29; Նախարարական Վահան, Աշխարհի նոր բաժանումը, Գահիրե, 1939 թ., էջ 98-101: Ռաֆայել Համբարձումյան, Նժդեհ, հարցուպատասխան, Բ հրատ., Երեւան, 2012 թ., էջ 68-72; Генри Киссинджер, Дипломатия, Москва, 1997 г., с. 292, 301, 314; Платонов Олег, Русский труд, Москва, 1991, стр.282-283:

24. Суворов В., Последняя Республика, Москва, 2005 г., с.107-110:

25. Суворов В., Очущение, М. 1999 г., с. 433; СБЭ, т. 5, с. 343:

26. Տե՛ս Марка Солонина «22 июня», Анатомия катастрофы.; Марк Солонин, 25 июня — глупость или агрессия?.; Латынина Юлия, Сталин - человек, который израсходовал Россию; Генри Киссинджер, Дипломатия, Москва, 1997 г., ст. 312-314; Суворов В., Последняя Республика, с. 196-206; Суворов В., Очищение, Москва, 1999 г., с.217-218,238):

27. Հայոց Պատմություն, հտ 4, գիրք առաջին, Երեւան, 2010, էջ 577;

28. Հայոց Պատմություն, հտ 4, գիրք առաջին, Երեւան, 2010, էջ 578;

29. Մանուկեան Ա. Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Երեւան, 1999 թ., էջ 7, 218-219; Горнов М.М. и др., История России, т. 2, М., 1995 г., с. 295: 30.Վիրապեան Ա. Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով, Երեւան, 2001 թ., էջ 160, 165, 79-80,74-75, 84:

31. Ա. Վիրապեան, Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով, էջ 164-169: Ա. Մանուկեան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., էջ 229:

32. Վիրապեան Ա., Հայաստանը Ստալինից մինչեւ Խրուշչով, Երեւան, 2001 թ., էջ 155-197:

33. Ա. Մանուկեան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., էջ 33, 114-129, 164, 218-241, 239:

34. Նաւասարդեան Վ., Աշխարհի նոր բաժանումը, Գահիրե, 1939 թ., էջ 96-97

35. Ղազարեան Հ., Սերի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերեալ, հտ. Ա, Երեւան, 2012 թ., էջ 9-10, 120-123:

36. Հայ ժողովրդի պատմություն, հտ. VI, Երեւան, 1981 թ., էջ 967: Երկանեան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երեւան, 1970 թ., էջ 187,260: Ակնունի Է. Կովկասեան վերքեր, 1903 թ. Ժնեւ, էջ 42-43, 284, Борян Б.А., Армения, международная дипломатия и СССР, часть 1, Москва-Ленинград, 1928 г., стр. 268:

37. Տե՛ս «Անկախություն» շաբաթաթերթ, 1988 թ. փետրուարի 22, էջ 1,3: «Անկախություն», 1988 թ. նոյեմբ. 16, թիւ 45 (55), էջ 7-10

38. «Անկախություն», 1988 թ. փետրուարի 22, էջ 13:

39. Տե՛ս «Անկախություն», շաբաթաթերթ., 1988 թ. մարտի 7, թիւ 20, էջ 2-3; ԱՆԿԱՄԻՆԻԹԻՆ, 1988թ., փետր. 29, թիւ 26; «Անկախություն», 1988 թ. մարտի 7, թիւ 20, էջ 2-3:

40. «Անկախություն» շաբաթաթերթ, 1988 թ. նոյեմբերի 30, թիւ 47(57), էջ 1-4, 19, 57-60:

41. «Անկախություն» շաբաթաթերթ, 1988 թ. նոյեմբերի 30, թիւ 1 (62), մ էջ 1-4:

42. «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1988 թ. նոյեմբերի 26, էջ 1: «Ասպարեզ» օրաթերթ, ԱՄՆ, Լոս Անջելես-Գլենդեյլ, 1988 թ. նոյեմբերի 23, էջ 1, 16): «Ասպարեզ», 1988 թ. նոյեմբերի 29: «Ազատ Հայք», 1989 թ. սեպտեմբերի 13, թիւ 17, էջ 3:

43. «Ազատ Հայք», թիւ 45-85 հաւաքական համար (կազմի վրայ սխալմամբ նշուած է թիւ 55-85), Երեւան 1991 թ., էջ 56, 51:

44. «Ազատ Հայք», թիւ 16, 1989 թ. սեպտեմբերի 16, էջ 7:

45. «Ազատ Հայք», շաբաթաթերթ, 1989 թ. յունիսի 28, թիւ 6, էջ 1-2, 9-11; Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի «Տեղեկագիր», թիւ 23/955/, 1989 թ. դեկտեմբերի 15, էջ 244-250; «Ազատ Հայք», 1989 թ. օգոստոսի 2, թիւ 9; «Ազատ Հայք», 1989 թ. օգոստոսի 23, թիւ 14, էջ 2, էջ 8-11; «Ազատ Հայք», 1989 թ. սեպտեմբերի 20, թիւ 18, էջ 9, 21, 32; սեպտեմբերի 27, թիւ 19, էջ 22; «Ազատ Հայք», 1989 թ. նոյեմբերի 15, թիւ 26, էջ 5, 9-11; «Ազատ Հայք», 1990 թ. յունուարի 3, թիւ 27, էջ 15; «Եերկոյան Երեւան» օրաթերթ, 1990 թ. յունուարի 3; «Հայոց խորհրդարան», Հայոց ազգային Նախախորհրդարանի պաշտօնաթերթ, 1989 թ. հոկտեմբերի 1, թիւ 1: Նախախորհրդարանի գործունեութեան եւ արձակած փաստաթղթերը տես նաեւ՝ «Անկախութիւն» շաբաթաթերթ, 1988 թ. սեպտեմբերի 12, թիւ 37, էջ 2; «Անկախութիւն», 1988 թ. հոկտեմբերի 12, թիւ 40/50, էջ 1; «Անկախութիւն», 1988 թ. նոյեմբերի 9, թիւ 44/54, էջ 1-16:

46. Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի ՏԵՂԵԿԱԳԻՐ, թիւ 23/955/, էջ 245-246:

47. «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1989 թ. օգոստոսի 3, էջ 3; 1989 թ. նոյեմբերի 23, 1989 թ. նոյեմբերի 30, դեկտեմբերի 1, դեկտեմբերի 2; «Ասպարէզ» օրաթերթ, ԱՄՆ, լոս Անջելէս-Գլենդէյլ, 1989 թ. նոյեմբերի 25, էջ 1:

48. «Ազատ Հայք», 5 յուլիսի-20 սեպտեմբերի 1990 թ.: Տպագրուել է նաեւ «Ազատ Հայք», թիւ 55-85(կազմի վրայ վրիպակ է, պէտք է լինի թիւ 43-85) թիւերի ժողովածոյ, էջ 18-20; Տե՛ս նաեւ էջ 11-15;

49. Տե՛ս «Ազատ Հայք» թիւ 43-54, 1990 թ յուլիսի 5-սեպտեմբերի 20, էջ 21-22:

50. «Ազատ Հայք» շաբաթաթերթ, թիւ 27, 1990 թ. յունուարի 3, էջ 17; «Ազատ Հայք» շաբաթաթերթ, 1990 թ. մարտի 21, էջ 7:

51. «Հայոց աշխարհ» թերթ, 1998 թ. փետրուարի 7, էջ 5:

ՌԱՖԵԱՅԷԼ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹԻՒՆԸ 1921-1949 թթ. ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Ե ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Rafael Hambardzumyan

Armenian Genocide was continued by the Bolshevik Russia
in the period between 1921-1949

Սրբազրիչ՝ Փառանձեմ Շահբազեան

Համակարգչային ձևաորումը՝ Լիանա Մինասեանի

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հին.՝ (374 10) 520 648
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Tumanyan str, Yerevan
Tel.: (374 10) 520 648
www.editprint.am
info@editprint.am



ՈՒՅԱՅԷԼ ՀԱՄԲԱՐՁՈՒ

1977.9.25
հ. Ն-20

Պատմաբան, հանրային ու քրակագիր, Գարեգին Նժդեհի կան կենսագրականի հեղինակ, ծն. է 1948թ. «Խուրթ» ընտանիքում, հանրական, (1980թ.) եւ «Յորդորակ», (1987թ) քաղաքագիտական աշխատութիւններում գիտականօրէն հիմնաւորել ու կանխատեսել է հայոց ազատագրական պայքարի բռնկումը, կոմունիստական կայսրութեան վերացումը եւ Հայաստանի անկախացումը: Այդ աշխատութիւնները եւ իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Անկախութիւն», եւ «Ազատ Հայք», թերթերում տպագրուած 1988-90թթ. քաղաքական յօդուածներ էական ազդեցութիւն են թողել արցախեան ազատամարտի եւ ընդհանրապէս 1988-2000թթ. հայ

քաղաքական մտքի զարգացման վրայ: 1987 թ. հոկտեմբերի 17-ին երեսնամեան անցկացրել է կայսրութեան սահմաններում առաջին բնապահպանական-քաղաքական հանրահաւաքը, իսկ 1988 թ. մայիսի 28-ին անցկացրել է Հայաստանի անկախութեան 60 ամեակի 1920 թ. ի վեր առաջին տօնակատարութիւնը Հայաստանում: 1988 թ. նոյեմբերին հանդէս եկաւ Արցախը վերամիաւորելու հետեւեալ նոր ծրագրով. քանի որ Կրեմլը բեկանում է հանրութեան պահանջով ընդունուած ՀՀ պետական ընտրովի մարմինների որոշումները, ժողովուրդը դրանք պէտք է կատարի իր ընտրած հանրային խորհրդարանով: Հանրային խորհրդարանի գաղափարը 1989 թ. օգոստոսի 16-ին իրագործեց Արցախի բնակչութիւնը իր ստեղծած Ազգային խորհրդով դառնալով կրեմլեան վարչախմբից անկախացած առաջին խորհրդարանն ու կառավարութիւնը Վարչաւեան բռնադաշնութիւնում (արցախից անմիջապէս յետոյ) երկրորդ ոչ կոմունիստական կառավարութիւնը 1989 թ. սեպտեմբերի 12-ին, կազմուեց Լեհաստանում): Երբ ՀՀԿ կոչւող խմբակը 1990 թ. իշխանութիւնը վերցրեց, Ո. Համբարձումեանը 1990 թ. օգոստոսի 7-ին խորհրդարանից հեռաթանկուող ելոյթում բացայայտելով Արցախի վերամիաւորումից նրանց հրաժարուելը եւ սեփականաշնորհում անուան տակ հանրային ունեցուածքի եւ բնակչութեան սեփականութեան կողոպուտը, Հայաստանում սկզբնաւորեց քաղաքական արհեստավարժ ընդդիմութիւնը: Նա 2007 թ. օգոստոսի 11-ին վերականգնեց 5-8-րդ դդ. Մամիկոնեանի վարած ազատամարտերում մշակուած, իսկ 1920-30-ական թթ. Գարեգին Նժդեհի ու Հայկ Ասատրեանի վերականգնած-լրացրած հայոց ազգային ազատագրական գաղափարաբանութիւնը Ուխտ մամիկոնեցից: 1999 թ. սեպտեմբերի 11-ին հիմնեց Նախիջեւանահայոց ազգային խորհուրդը (խորհրդարան), իսկ 1999 թ. սեպտեմբերին առաջարկեց Արեւմտահայաստանի անունից իրաւաբանօրէն հանդէս գալու համար ստեղծել Արեւմտահայերի ներկայացուցչական մարմին, որը պիտի ընտրուէր այդ նպատակով գումարելի Արեւմտահայոց համագումարը: Սեւրի դաշնագրի եւ ԱՄՆ նախագահ Վոլդրո Ուիլսոնի կազմած Իրաւարար վճիռ-քարտեզի մասին 1988-2007 թթ. անցկացրած գիտաժողովներով եւ այդ փաստաթղթերի ընդունման տարելիցների նշումով հայութեան մէջ արմատաւորեց Հայկական Հարցի հետեւեալ ըմբռնումը. Հայոց հարցի էութիւնը եւ իրաւաբանական հիմքը ՀՀ սահմանները ամրագրող Ուլսոնեան միջազգային Իրաւարար վճիռ-քարտեզը կեանքի կոչելն է:

